

ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐՆ ՈՒՆԵՆ ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԿԱԼԱՆՔԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ

ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ ԿԱԼԱՆՔԸ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է, ԵՎ ԿԱԼԱՆՔԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆՎԻ ՕՐԵՆՔՈՎ

ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆՎԵՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ

ԿԱԼԱՆՔԻ ԿԱՄ ԴԻԱ ԵՐԿԱՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԵՆԹԱԿԱ ԼԻՆԵՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ

ԿԱԼԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ

ԿԱԼԱՆՔԸ ՊԵՏՔ Է ԵՆԹԱԿԱ ԼԻՆԻ ԱՆԿԱԽ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԿԱԼԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուղեցույց ապաստան հայցողների նկատմամբ կալանքի կիրառելի չափանիշների և չափորոշիչների և կալանքի այլընտրանքների վերաբերյալ



ԿԱԼԱՆՔԸ ՉՊԵՏՔ Է ԽՏՐԱԿԱՆ ԼԻՆԻ

ԿԱԼԱՆՔԸ ՉՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԿԱՄԱՅԱԿԱՆ, ԵՎ ԴԻԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑԱՆԿԱՑԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՐԱ

ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՔ Է ՀԱՐԳՎԻ



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

ՄԱԿ ՓԳՀ-ն հրապարակում է *Ապաստան հայցողների կալանքի և կալանքի այլընտրանքների վերաբերյալ չափորոշիչների և չափանիշների ուղեցույցը*՝ իր մանդատի համաձայն, ըստ Միավորված ազգերի կազմակերպության՝ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրության, ինչպես նաև ըստ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թ. կոնվենցիայի Հոդված 35-ի և դրան կից 1967 թ. Արձանագրության Հոդված II-ի: Սույն Ուղեցույցը փոխարինում է ՄԱԿ ՓԳՀ-ի՝ *Ապաստան հայցողների նկատմամբ կալանքի կիրառելի չափորոշիչների և չափանիշների* 1999 թ. փետրվարի ուղեցույցը:

Սույն Ուղեցույցի նպատակը կառավարություններին, պատգամավորներին, իրավական գործունեությանը զբաղվողներին, որոշում կայացնողներին, այդ թվում դատաիրավական մարմիններին, ինչպես նաև կալանքի և ապաստանի տրամադրման հարցերով զբաղվող այլ միջազգային և ազգային մարմիններին, ներառյալ ՀԿ-ներին, մարդու իրավունքներով զբաղվող ազգային կառույցներին և ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակազմին ուղղորդում տրամադրելն է:



Ուղեցույցը կարելի է գտնել <http://www.unhcr.org/refworld/docid/503489533b8.html> կայքում:

© UNHCR 2012

Բովանդակություն

Ներածություն	6
Կիրառության ոլորտը	8
Տերմինաբանությունը	9
Ուղենիշներ	12
Ուղենիշ 1. Ապաստան հայցելու իրավունքը պետք է հարգվի	13
Ուղենիշ 2. Ապաստան հայցողներն ունեն անձի ազատության և անվտանգության, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու իրավունք	14
Ուղենիշ 3. Կալանքը պետք է լինի օրենքին համապատասխան և օրենքով սահմանված	16
Ուղենիշ 4. Կալանքը չպետք է լինի կամայական, և դրա վերաբերյալ ցանկացած որոշում պետք է հիմնվի անձի մասնավոր հանգամանքների գնահատման վրա	17
Ուղենիշ 4.1 Կալանքը բացառիկ միջոց է և կարող է արդարացվել միայն օրինական նպատակներով	18
4.1.1 Հասարակական կարգի պահպանումը	19
4.1.2 Հանրային առողջության պահպանումը	22
4.1.3 Ազգային անվտանգության պաշտպանությունը	22
4.1.4 Կալանքը չարդարացնող նպատակները	23
Ուղենիշ 4.2. Կալանքի կարելի է դիմել միայն այն դեպքերում, երբ դա ճանաչվել է անհրաժեշտ և ողջամիտ բոլոր պարագաներում և համարժեք է օրինական նպատակին	24
Ուղենիշ 4.3. Պետք է քննության առնվեն կալանքի այլընտրանքները	25

Ուղենիշ 5.	Կալանքը չպետք է խտրական լինի	29
Ուղենիշ 6.	Անորոշ ժամանակով կալանքը կամայականություն է, և կալանքի առավելագույն տևողությունն անհրաժեշտ է սահմանել օրենքով	30
Ուղենիշ 7.	Կալանքի կամ դրա երկարացման մասին որոշումները պետք է ենթակա լինեն նվազագույն ընթացակարգային երաշխիքների.....	31
Ուղենիշ 8.	Կալանքի պայմանները պետք է լինեն մարդկային և արժանապատիվ	34
Ուղենիշ 9.	Առանձին ապաստան հայցողների մասնավոր հանգամանքները և կարիքները պետք է հաշվի առնվեն.....	39
	Ուղենիշ 9.1 Տրավմաների և կտտանքների զոհերը.....	39
	Ուղենիշ 9.2 Երեխաները.....	40
	Ուղենիշ 9.3 Կանայք.....	44
	Ուղենիշ 9.4 Մարդկանց թրաֆիքինգի իրական կամ հավանական զոհերը.....	45
	Ուղենիշ 9.5 Հաշմանդամություն ունեցող ապաստան հայցողները.....	46
	Ուղենիշ 9.6 Տարեց ապաստան հայցողները	47
	Ուղենիշ 9.7 Լեւրուիի, համասեռամուլ, բիսեքսուալ, տրանսգենդերային կամ միջգենդերային ապաստան հայցողները.....	47
Ուղենիշ 10.	Կալանքը պետք է ենթակա լինի անկախ մոնիթորինգի և ստուգման	48
Հավելված Ա	50
Հղումներ	61
Կարևոր ինտերնետային հասցեներ	58
Տեքստում օգտագործված հայերեն հապավումների ցանկը	81

Ներածություն

1. Անձի ազատության և անվտանգության իրավունքները մարդու հիմնարար իրավունքներից են, որոնց մասին հղում կա կամայական կալանքի միջազգային արգելքի մեջ և որոնք ուղեկցվում են ազատ տեղաշարժման իրավունքով: Գիտակցելով հանդերձ այն բազմաթիվ խնդիրները, որ ներկայումս գոյություն ունեն ապաստանի ազգային համակարգերում և որոնց պատճառը անկանոն միգրացիան է, ինչպես նաև փախստականների և մարդու իրավունքների չափանիշներով պայմանավորված՝ իրենց տարածք ոչ քաղաքացիների մուտք գործելու և այնտեղ մնալու վերահսկման՝ պետությունների իրավունքը¹, սույն Ուղեցույցն արտացոլում է ապաստան հայցողների կալանավորման վերաբերյալ միջազգային իրավունքի առկա իրավիճակը և նպատակ ունի ուղղորդելու:
 - ա) կառավարություններին՝ ապաստանի և միգրացիայի առնչությամբ կալանքի տարր պարունակող քաղաքականություններ մշակելու և իրականացնելու գործում և
 - բ) որոշում կայացնողներին, ներառյալ դատավորներին՝ առանձին դեպքերի համար կալանքի անհրաժեշտությունը քննելիս:
2. Հաշվի առնելով կալանքի պատճառած զրկանքները, ինչպես նաև փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքին և չափանիշներին համապատասխան, ապաստան հայցողներին կալանքի ենթարկելուց սովորաբար պետք է ձեռնպահ մնալ՝ այն համարելով վերջին միջոց: Քանի որ ապաստան հայցելի իրավախախտում չէ, այս իրավունքից օգտվող ցանկացած անձի ազատության բռնի սահմանափակումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ այդ նախատեսված է օրենքով, պետք է մանրակրկիտ կերպով սահմանափակվի և ենթակա լինի

անհապաղ վերանայման: Կալանք կարելի է կիրառել միայն այն պարագայում, երբ դա օրինական նպատակ է հետապնդում և ամեն առանձին դեպքի համար սահմանվել է որպես անհրաժեշտ և համարժեք միջոց: Ապաստան հայցելու իրավունքը հարգելը ենթադրում է ապաստան հայցողների համար բաց, մարդկային ընդունելություն, ներառյալ ապահով, արժանապատիվ և մարդու իրավունքներին համահունչ վերաբերմունք²:

3. Կառավարությունները, կալանքից բացի, անկանոն միգրացիայի խնդիրները կարգավորելու բազմաթիվ այլ եղանակներ ունեն, որոնք հաշվի են առնում ինչպես կառավարությունների մտահոգությունները, այնպես և խնդրո առարկա անհատների մասնավոր հանգամանքները³: Իրականում չկան փաստեր, որոնք հավաստեին, թե կալանքն անկանոն միգրացիայի վրա որևէ կանխիչ ազդեցություն ունի⁴: Որևէ նման ազդեցությունից զատ, կանխիչ նպատակով իրականացվող՝ կալանքի քաղաքականությունները սովորաբար անօրինական են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի տեսանկյունից, քանի որ չեն բխում ամեն առանձին դեպքի համար կալանքի անհրաժեշտության գնահատումից: Բացի մարդու իրավունքների չափանիշների հետ ներդաշնակություն ապահովելուց, կառավարություններին առաջարկվում է վերանայել կալանքի իրենց քաղաքականությունները և պրակտիկան՝ կալանքի այլընտրանքների վերաբերյալ վերջին հետազոտությունների լույսի ներքո (դրանց մի մասը փաստված են սույն Ուղեցույցում): ՄԱԿ ՓԳՀ-ն պատրաստակամություն է հայտնում աջակցելու կառավարություններին՝ կալանքի այլընտրանքային ծրագրերի մշակման գործում:

Կիրառության ոլորտը

4. Սույն Ուղեցույցն արտացոլում է ապաստան հայցողների և միջազգային պաշտպանություն հայցող այլ անձանց՝ իմիգրացիայի հիմքով կալանքի առնչությամբ միջազգային իրավունքի առկա վիճակը: Այն հավասարապես կիրառելի է փախստականների և միջազգային պաշտպանության կարիք ունեցող այլ անձանց նկատմամբ, եթե նրանց կալանքի են ենթարկել բացառապես իմիգրացիայով պայմանավորված պատճառներով: Այն նմանապես կիրառելի է ապաստան հայցող՝ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ, սակայն առանձին չի անդրադառնում ապաստան չհայցող քաղաքացիություն չունեցող անձանց⁵, միջազգային պաշտպանության կարիք չունեցող անձանց⁶ կամ այլ միգրանտներին առնչվող իրավիճակներին, թեև այստեղ մանրամասնաձ շատ չափանիշներ կարող են նրանց հանդեպ կիրառելի լինել *mutatis mutandis* սկզբունքով: Սա մասնավորապես վերաբերում է միգրացիոն համատեքստում փախստական չհանդիսացող քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր կամայական կալանքի բավական մեծ ռիսկի են ենթակա: Ուղեցույցը կիրառելի չէ ապաստան հայցող կամ փախստական այն անձանց նկատմամբ, ովքեր կալանքի են ենթարկվել քրեական իրավախախտումների պատճառով:

Տերմինաբանությունը



ԿԱԼԱՆՔ

5. Սույն Ուղեցույցի շրջանակներում «կալանքը» նշանակում է ազատագրվում կամ մեկուսացում փակ տարածքում, որն ապաստան հայցողին չի թույլատրվում լքել իր կամքով, ներառյալ, բայց ոչ միայն, բանտերը կամ նպատակային կալանավայրերը, փակ տեսակի հատուկ կացարանները կամ առանձնացման կենտրոնները կամ վայրերը:
6. Կալանքի վայրը կարող են հատկացնել պետական իշխանությունները կամ մասնավոր կապալառուները: Բանտարկությունը կարող է լիազորված լինել վարչական կամ դատական ընթացակարգով, կամ անձը կարող է կալանավորված լինել «օրինական» իշխանությամբ կամ առանց դրա: Կալանավորումը կամ լիովին մեկուսացումը ազատության սահմանափակման սանդղակում ծայրահեղ տեղ է գրավում (տե՛ս նկ. 1): Իմիգրացիոն համատեքստում տեղաշարժի ազատության այլ սահմանափակումները նմանապես ենթակա են միջազգային չափանիշներին⁷: Ազատագրվման (կալանքի) և տեղաշարժման ավելի փոքր սահմանափակումների միջև տարբերությունը վերաբերում է «աստիճանին և ուժգնությանը, այլ ոչ՝ բնույթին կամ էությանը»⁸: Սույն Ուղեցույցն առավել մանրակրկիտ անդրադառնում է կալանքին (կամ լիակատար մեկուսացմանը), սակայն այն մասնակիորեն անդրադառնում է նաև լիակատար մեկուսացումից պակաս ծայրահեղ միջոցներին:
7. Կալանավորումը կարող է իրականացվել ամենատարբեր վայրերում, ներառյալ ցամաքում և ծովային սահմաններում, օդանավակայանների «միջազգային գոտիներում»⁹, կղզիներում¹⁰, նավերի վրա¹¹, ինչպես նաև փախստականների փակ ճամբարներում, սեփական տանը (տնային

կալանք) և մինչև իսկ տվյալ տարածքից դուրս¹²: Անկախ այն բանից, թե կալանքի տվյալ վայրին ինչ անուն կտան, կարևոր հարցերն են, թե արդյո՞ք ապաստան հայցողին *de facto* զրկում են իր ազատությունից, և արդյո՞ք այս ազատազրկումն օրինական է ըստ միջազգային իրավունքի:



Նկ. 1¹³

ԿԱԼԱՆՔԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

8. «Կալանքի այլընտրանքները» իրավական տերմին չէ, բայց սույն Ուղեցույցում օգտագործված է պարզության համար և վերաբերում է այն բոլոր օրենքներին, քաղաքականություններին կամ գործելակերպերին, որոնք թույլ են տալիս, որ ապաստան հայցողները բնակվեն համայնքում՝ որոշակի պայմաններով, կամ ենթարկվելով իրենց տեղաշարժվելու ազատության որոշակի սահմանափակումների: Քանի որ կալանքի որոշ այլընտրանքներ ևս ենթադրում են տեղաշարժման ազատության որոշ սահմանափակումներ (և դրանց մի մասը կարող են դասակարգվել որպես կալանքի ծևեր), դրանք նույնպես ենթակա են մարդու իրավունքների չափանիշներին (տե՛ս նկ. 2):



ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂ ԱՆՁ

9. «Ապաստան հայցող» տերմինն այս Ուղեցույցում վերաբերում է այն անձանց, ովքեր Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիայի և դրա՝ 1967 թ. Արձանագրության (1951 թ. կոնվենցիա)¹⁴, կամ փախստականների վերաբերյալ որևէ տարածաշրջանային իրավական փաստաթղթի համապատասխան դիմում են փախստականի կարգավիճակ ստանալու համար, ինչպես նաև այլ անձանց, ովքեր¹⁵ փնտրում են լրացուցիչ, օժանդակ կամ ժամանակավոր պաշտպանություն¹⁶: Ուղեցույցը վերաբերում է նրանց, ում հայցադիմումները քննության են առնվում կարգավիճակի սահմանման ընթացակարգերով, ինչպես նաև ընդունելիության, նախնական ընտրության կամ այլ նման ընթացակարգերով: Ուղեցույցը վերաբերում է նաև նրանց, ովքեր օգտվում են իրենց՝ միջազգային պաշտպանության հայցի դատական վերանայման իրավունքից:



ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ

10. Միջազգային իրավունքով «քաղաքացիություն չունեցող անձ» է սահմանվում այն անձը, «ով չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ դրա օրենսդրության հիման վրա»¹⁷: Քաղաքացիություն չունեցող՝ ապաստան հայցող անձ է համարվում այն անձը, ով ըստ 1951 թ. կոնվենցիայի¹⁸ հայցում է փախստականի կարգավիճակ, կամ որևէ այլ միջազգային պաշտպանություն:



UNHCR
The UN
Refugee Agency

ՄԱԿ ՓԳՀ-Ի ՈՒՂԵՑՈՒՅՑ ԿԱԼԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուղենիւ 1.	Ապաստան հայցելու իրավունքը պետք է հարգվի
Ուղենիւ 2.	Ապաստան հայցողներն ունեն անձի ազատության և անվտանգության, ինչպես նաև ազատ տեղաշարվելու իրավունք
Ուղենիւ 3.	Կալանքը պետք է լինի օրենքին համապատասխան և օրենքով սահմանված
Ուղենիւ 4.	Կալանքը չպետք է լինի կամայական, և դրա վերաբերյալ ցանկացած որոշում պետք է հիմնվի անձի մասնավոր հանգամանքների գնահատման վրա, ըստ հետևյալի.
Ուղենիւ 4.1.	Կալանքը բացառիկ միջոց է և կարող է արդարացվել միայն օրինական նպատակներով
Ուղենիւ 4.2.	Կալանքի կարելի է դիմել միայն այն դեպքերում, երբ դա ճանաչվել է անհրաժեշտ և ողջամիտ բոլոր պարագաներում և համարժեք է օրինական նպատակին
Ուղենիւ 4.3.	Պետք է քննության առնվեն կալանքի այլընտրանքները
Ուղենիւ 5.	Կալանքը չպետք է խտրական լինի
Ուղենիւ 6.	Անորոշ ժամանակով կալանքը կամայականություն է, և կալանքի առավելագույն տևողությունն անհրաժեշտ է սահմանել օրենքով
Ուղենիւ 7.	Կալանքի կամ դրա երկարացման մասին որոշումները պետք է ենթակա լինեն նվազագույն ընթացակարգային երաշխիքների
Ուղենիւ 8.	Կալանքի պայմանները պետք է լինեն մարդկային և արժանապատիվ
Ուղենիւ 9.	Պետք է հաշվի առնվեն առանձին ապաստան հայցողների մասնավոր հանգամանքները և կարիքները
Ուղենիւ 10.	Կալանքը պետք է ենթակա լինի անկախ մոնիթորինգի և ստուգման

ՈՒՂԵՆԻՇ 1

Ապաստան հայցելու իրավունքը պետք է հարգվի

11. Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից, մարդու իրավունքների ոտնահարումներից և ուրիշ վտանգներից այլ երկրներում ապաստան հայցելու և այն ունենալու իրավունք: Հետևաբար ապաստան հայցելը անօրինական գործողություն չի հանդիսանում¹⁹: Ավելին՝ 1951 թ. կոնվենցիան ամրագրում է, որ ապաստան հայցողները չպետք է պատժվեն իրենց՝ որևէ երկիր անօրինական մուտքի և այնտեղ գտնվելու համար, պայմանով, որ նրանք պետք է անհապաղ ներկայանան իշխանություններին և հիմնավորեն իրենց անօրինական մուտքը կամ ներկայությունը²⁰: Ապաստան հայցելու իրենց իրավունքն իրականացնելիս՝ ապաստան հայցողները հաճախ ստիպված են որևէ տարածք ժամանել կամ մուտք գործել առանց նախնական թույլտվության: Այս տեսակետից ապաստան հայցողների վիճակը կարող է արմատապես տարբեր լինել սովորական միգրանտների վիճակից այն առումով, որ նրանք կարող են հնարավորություն չունենալ հետևելու մուտքի համար սահմանված նորմերին և կանոններին: Օրինակ, նրանք կարող են ի վիճակի չլինել նախքան փախուստը անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու՝ հետապնդման վախի կամ անհապաղ մեկնման պատճառով: Այս գործոնները և այն, որ ապաստան հայցողները հաճախ տրավմատիկ իրավիճակների են ենթարկված լինում, պետք է հաշվի առնվեն՝ անօրինական մուտքի կամ ներկայության հիման վրա նրանց տեղաշարժման ազատության սահմանափակումները սահմանելիս:

ՈՒՂԵՆԻՇ 2

Ապաստան հայցողներն ունեն անձի ազատության և անվտանգության, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու իրավունք

12. Անձի ազատության և անվտանգության²¹ և ազատ տեղաշարժվելու²² հիմնարար իրավունքներն ամրագրված են մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր հիմնական միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում և իրավունքի գերակայության վրա հիմնված բոլոր իրավական համակարգերի հիմնական բաղադրիչներ են հանդիսանում: Գերագույն հանձնակատարի ծրագրի Գործադիր կոմիտեն (Գործկոմ) մի շարք առիթներով անդրադարձել է ապաստան հայցողների կալանավորման խնդրին²³: Վերոհիշյալ իրավունքները որպես սկզբունք վերաբերում են բոլոր մարդկանց՝ անկախ նրանց իմիգրացիոն, փախստականի, ապաստան հայցողի կամ այլ կարգավիճակից²⁴:
13. 1951 թ. կոնվենցիայի Հոդված 31-ը հատկապես մասնավորեցնում է, որ անկանոն կերպով երկիր մուտք գործած կամ նրա տարածքում գտնվող փախստականները (կամ ապաստան հայցողները) ենթակա չեն պատժի, եթե նրանք անմիջապես ներկայացել են և հիմնավորել են իրենց անօրինական մուտքը կամ ներկայությունը: Հոդվածն այնուհետև նշում է, որ այս փախստականների (կամ ապաստան հայցողների) նկատմամբ չպետք է կիրառվեն տեղաշարժվելու ազատության այլ սահմանափակումներ, քան այնպիսիք, որ բխում են անհրաժեշտությունից, իսկ վերջիններս կարող են կիրառվել միայն մինչև նրանց կարգավիճակի օրինականացումը կամ այլ երկիր մուտք գործելու թույլտվությունը²⁵: 1951 թ. կոնվենցիայի Հոդված 26-ը սահմանում

է օրինականորեն երկրի տարածքում գտնվող փախստականների ազատ տեղաշարժման և բնակության վայր ընտրելու իրավունքը²⁶: Այս դրույթից օգտվելու տեսանկյունից ապաստան հայցողները համարվում են օրինականորեն երկրի տարածքում գտնվող²⁷:

14. Այս բոլոր իրավունքները միասին՝ ապաստան հայցելու իրավունքը, անօրինական մուտքի կամ ներկայության համար պատժի ենթակա չլինելը, անձի ազատության և անվտանգության և ազատ տեղաշարժման իրավունքները, նշանակում են, որ ապաստան հայցողների նկատմամբ կալանքի կիրառումը պետք է վերջին միջոց համարվի՝ այլ օրենքի բացակայության պարագայում նախընտրելով ազատությունը:

ՈՒՂԵՆԻՇ 3

Կալանքը պետք է լինի օրենքին համապատասխան և օրենքով սահմանված

15. Ցանկացած կալանք կամ ազատազրկում պետք է լինի պետության օրենքին համապատասխան և դրանով սահմանված²⁸: Որևէ ազատազրկում, որ չի համապատասխանում պետության օրենքներին՝ ապօրինի է, ինչպես պետության օրենսդրության, այնպես էլ միջազգային իրավունքի տեսանկյունից: Միևնույն ժամանակ, թեև կալանքի օրինականությունը սահմանելիս հիմնական նկատառումը պետական օրենսդրությունն է, «այն ոչ միշտ է որոշիչ փարր հանդիսանում՝ ազատազրկման արդարացիությունը գնահատելիս»²⁹: Մասնավորապես, այն առանձնահատուկ գործոնը, որը պետք է հաշվի առնվի և որը հիմնական նպատակ է հանդիսանում՝ անձի կամայական ազատազրկումը կանխելն է³⁰:
16. Կալանքի մասին օրենքները պետք է ներդաշնակ լինեն իրավական որոշակիության սկզբունքին: Սա պահանջում է, որ, այլոց թվում, օրենքը և դրա իրավական հետևանքները լինեն կանխատեսելի և կոահելի³¹: Կալանք թույլատրող օրենքն, օրինակ, չպետք է հետադարձ ուժ ունենա³²: Ազգային օրենսդրության մեջ իրավական որոշակիության պահանջը կբավարարի կալանքի հիմքերի պարզորոշ սահմանումը³³:
17. Օրենքում կամայական կալանքից պաշտպանության երաշխիքների անբավարարությունը, ինչպես օրինակ՝ կալանքի առավելագույն տևողության սահմանափակման բացակայությունը կամ այն բողոքարկելու արդյունավետ միջոցի անհասանելիությունը, նույնպես կարող են հարցականի տակ դնել կալանքի օրինականությունը³⁴:

ՈՒՂԵՆԻՇ 4

Կալանքը չպետք է լինի կամայական, և դրա վերաբերյալ ցանկացած որոշում պետք է հիմնվի անձի մասնավոր հանգամանքների գնահատման վրա

18. Միգրացիայի համատեքստում կալանքը միջազգային իրավունքով ինքնին արգելված չէ, և ոչ էլ անձի ազատության իրավունքն է բացարձակ³⁵: Սակայն միջազգային իրավունքը կարևոր երաշխիքներ է սահմանում *անօրինական* (տե՛ս ուղենիշ 3-ը), ինչպես նաև կամայական կալանքի դեմ: «Կամայականությունը» պետք է լայնորեն մեկնաբանել՝ ընդգրկելով ոչ միայն ապօրինությունը, այլև անհամապատասխանության, անարդարության և անկանխատեսելիության տարրերը³⁶: Կամայականությունից խուսափելու համար հարկավոր է, որպեսզի կալանքը անհրաժեշտություն հանդիսանա ամեն առանձին դեպքում, ողջամիտ՝ ամեն պարագայում և համարժեք օրինական նպատակին (տե՛ս ուղենիշներ 4.1-ը և 4.2-ը)³⁷: Բացի թվարկածից, կալանքը կարող է կամայական համարվել, եթե չեն դիտարկվել ավելի պակաս հարկադրական միջոցները (ուղենիշ 4.3):
19. Կալանքի մասին որոշումները պետք է, որպես հիմնարար իրավունք, հիմնված լինեն դրա անհրաժեշտության մանրակրկիտ և անհատականացված գնահատման վրա և օրինական նպատակին համապատասխան: Այս առումով որոշում կայացնողներին կարող են ուղղորդել ապաստան հայցողների կոնկրետ կատեգորիաների առանձնահատուկ հանգամանքները կամ կարիքները հաշվի առնող՝ ընտրության և գնահատման պատշաճ գործիքները (տե՛ս ուղենիշ 9-ը): Այստեսակ որոշումներն ուղղորդող գործոններ կարող են լինել ապաստանի հայցման գործընթացի փուլը, ենթադրվող վերջնական

նպատակակետը, ընտանեկան և/կամ համայնքային կապերը, իրավական առումով նախկին վարքը և բնավորությունը, օրենքից խուսափելու հավանականությունը, օրենքին ենթարկվելու անհրաժեշտության գիտակցումը և պատրաստակամության արտահայտումը:

20. Որպես կալանքի այլընտրանք՝ համայնքում տեղավորելու (ուղենիշ 4.3 և Հավելված Ա) մակարդակը և համապատասխանությունը պետք է դիտարկվի՝ համեմատելով անհատի մասնավոր հանգամանքները և դրանցով պայմանավորված՝ համայնքի ռիսկը: Համայնքին անհատի կամ նրա ընտանիքի համապատասխանության սահմանումը՝ այդ թվում հաշվի առնելով օժանդակության անհրաժեշտ և հասանելի ծառայությունների մակարդակը, ևս պետք է յուրաքանչյուր գնահատման մաս հանդիսանա:

Հարկադիր կամ ինքնաբերական կալանքը կամայականություն է, քանի որ չի հիմնվում կոնկրետ դեպքի առնչությամբ կալանքի անհրաժեշտության հետաքննման վրա³⁸:

Ուղենիշ 4.1

Կալանքը բացառիկ միջոց է և կարող է արդարացվել միայն օրինական նպատակներով

21. Կալանքի կարելի է դիմել բացառապես օրինական նպատակով: Այսպիսի նպատակի բացակայության պարագայում կալանքը կհամարվի կամայական, մինչև իսկ եթե մուտքը երկիր անօրինական է եղել³⁹: Կալանքի նպատակը պետք է հստակորեն սահմանված լինի օրենսդրության և/կամ կանոնդրության մեջ (տե՛ս ուղենիշ 3-ը)⁴⁰: Ապաստան հայցողների կալանքի համատեքստում գոյություն ունի երեք նպատակ, որոնց պարագայում կոնկրետ դեպքերում կալանքը կարող է անհրաժեշտ լինել, և դրանք ընդհանուր առմամբ համահունչ են միջազգային իրավունքին: Այդ նպատակներն են.

հասարակական կարգը, հանրային առողջությունը և ազգային անվտանգությունը:

4.1.1 Հասարակական կարգի պահպանումը

Օրենքից խուսափումը կանխելու նպատակով և/կամ համագործակցությունից հրաժարվելու հավանականության դեպքում

22. Եթե բավական հիմնավոր ենթադրություն կա, որ կոնկրետ ապաստան հայցողը կարող է խուսափել օրենքից, կամ որևէ այլ կերպ հրաժարվել իշխանությունների հետ համագործակցելուց, տվյալ առանձին դեպքի համար կալանքը կարող է անհրաժեշտ լինել⁴¹: Այն գործոնները, որ պետք է հաշվի առնվեն այսպիսի կալանքի անհրաժեշտությունը գնահատելիս, կարող են ներառել, օրինակ, նախկինում համագործակցության կամ դրա մերժման դեպքերը, անցյալում ազատման կամ երաշխավորությամբ ազատման պայմաններին ենթարկվելը կամ չենթարկվելը, ընտանեկան կամ համայնքային կապերը կամ ապաստանած երկրում օժանդակման այլ ցանցերը, իրենց հայցի հիմնական տարրերի մասին տեղեկություն տրամադրելու պատրաստակամությունը կամ մերժումը, կամ թե արդյո՞ք հայցը բացահայտորեն անհիմն է կամ չարաշահում է հանդիսանում⁴²: Ընտրության և գնահատման պատշաճ մեթոդների կիրառումը կարևոր է, որպեսզի *bona fide* ապաստան հայցողներն անհրավորեն չկալանավորվեն⁴³:

Ակնհայտորեն անհիմն կամ որոշակիորեն չարաշահում հանդիսացող հայցերի պարագայում արագացված ընթացակարգերով

23. Ակնհայտորեն անհիմն կամ որոշակիորեն չարաշահում հանդիսացող հայցերի պարագայում արագացված ընթացակարգերով կալանքը պետք է կանոնակարգվի օրենքով և, համարժեքության նկատառումներից ելնելով, պետք է ծանրութեթև անի առկա տարբեր շահերը⁴⁴: Կալանավորումն արագացված ընթացակարգերի պարագայում կարող է կիրառվել միայն այն

դեպքերում, որոնք հստակ սահմանվել են որպես «ակնհայտորեն անհիմն» կամ «որոշակիորեն չարաշահում հանդիսացող»⁴⁵, իսկ կալանքի ենթարկվածների վրա կտարածվեն սույն Ուղեցույցում ամրագրված պաշտպանության ձևերը:

Ինքնությունը պարզելու և/կամ անվտանգության նախնական ստուգման նպատակով

24. Կալանքի նվազագույն ժամկետները կարող են թույլատրելի լինել ինքնության և անվտանգության նախնական ստուգումներ իրականացնելու նպատակով, այն դեպքերում, երբ ինքնությունն անորոշ է կամ վիճելի, կամ անվտանգության ռիսկի որոշակի նշաններ կան⁴⁶: Միևնույն ժամանակ կալանքը կարող է տևել ճիշտ այնքան, որքան կտևեն ինքնությունը պարզելու և անվտանգության հետ կապված ստուգումներ իրականացնելու համար պահանջվող ողջամիտ ջանքերը և չի կարող գերազանցել օրենքով սահմանված ժամկետները (տե՛ս ստորև):
25. Հիշելով, որ ապաստան հայցողները հաճախ անօրինական մուտքի կամ անօրինական տեղաշարժումների, ներառյալ՝ առանց ինքնության փաստաթղթերի ճամփորդելու արդարացի պատճառներ ունեն⁴⁷, կարևոր է երաշխավորելը, որ նրանց չառաջադրվեն իմրագրացիոն անիրատեսական պահանջներ, որոնք կակնկալեն ինքնության փաստաթղթերի այնպիսի քանակ և տեսակներ, որ նրանք ողջամտորեն չեն կարող ներկայացնել: Բացի այդ, ինքնության փաստաթղթերի բացակայության պարագայում ինքնությունը կարելի է պարզել այլ տեղեկությունների հիման վրա ևս: Փաստաթղթեր տրամադրել չկարողանալը չպետք է ինքնաբերաբար մեկնաբանվի որպես համագործակցությունից խուսափում, կամ չպետք է հանգեցնի անվտանգության վերաբերյալ անբարենպաստ գնահատականի: Ապաստան հայցողները, ովքեր ժամանել են առանց ինքնության փաստաթղթերի, այն պատճառով, որ չեն կարողացել դրանք ձեռք բերել իրենց ծագման երկրում, չպետք է կալանքի ենթարկվեն սուկ այդ պատճառով: Այս դեպքում ավելի

նպատակահարմար է գնահատել, թե որքանով հիմնավոր է ապաստան հայցողի բացատրությունը՝ փաստաթղթեր չունենալու, դրանք կորցրած լինելու կամ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, թե արդյո՞ք տվյալ անձը իշխանությունները մոլորեցնելու նպատակ է ունեցել, կամ արդյո՞ք նա հրաժարվում է համագործակցել ինքնության ճշտման գործընթացում:

26. Ինքնության ճշտման նպատակով կալանքի ժամկետը պետք է խստորեն սահմանափակվի, քանի որ փաստաթղթեր չունենալը կարող է հանգեցնել անորոշ, տևական կալանքի և դրա հիմնական պատճառն է հանդիսանում:
27. Թեև քաղաքացիությունը սովորաբար անձի ինքնության բաղադրիչն է, դրա գնահատումը բավական բարդ գործընթաց է և ապաստան հայցողների պարագայում պետք է իրականացվի պատշաճ ընթացակարգով⁴⁸:

Նախնական հարցազրույցի համատեքստում՝ միջազգային պաշտպանությանը դիմելու հիմքերի արձանագրման նպատակով, եթե այդ չի կարելի անել առանց կալանավորման

28. Ապաստան հայցողի կարճատև կալանավորումը թույլատրելի է, եթե այն նախնական հարցազրույցի համատեքստում միջազգային պաշտպանությանը դիմելու նրանց հիմքերն արձանագրելու նպատակ է հետապնդում⁴⁹: Սակայն նման կալանքը կարող է արդարացված լինել, միայն եթե վերոհիշյալ տեղեկությունները հնարավոր չէ ձեռք բերել առանց կալանավորման: Սա վերաբերում է ապաստան հայցողից ապաստան հայցելու պատճառների վերաբերյալ կարևոր փաստեր ձեռք բերելուն, բայց ոչ պարտադիր՝ հայցի բոլոր փաստարկները սահմանելուն: Ընդհանուր սկզբունքի, այն է՝ որ ապաստան հայցողի նկատմամբ կալանքը ծայրահեղ միջոց է հանդիսանում, այս բացառությունը չի կարող որպես արդարացում օգտագործվել կարգավիճակի սահմանման ողջ տևողության ընթացքում կալանավորման կամ անորոշ ժամկետով կալանավորման համար:

4.1.2 Հանրային առողջության պահպանումը

29. Առանձին ապաստան հայցողների առողջական վիճակի ստուգումը կարող է նրանց մեկուսացման համար օրինական հիմք հանդիսանալ, եթե այն արդարացված է տվյալ առանձին դեպքում, կամ կանխարգելիչ միջոց է հանդիսանում որոշակի վարակիչ հիվանդությունների կամ համաճարակների պարագայում: Իմիգրացիոն համատեքստում նմանօրինակ ստուգումները կարող են իրականացվել երկիր ժամանման պահին կամ այնուհետև՝ հնարավորինս շուտ: Այս հիմքով անձի մեկուսացման ցանկացած երկարաձգում կամ տեղաշարժման սահմանափակում կարող է տեղի ունենալ, եթե դա արդարացված է բուժման նպատակներով, հավաստված է մասնագիտական որակավորում ունեցող բուժաշխատողների կողմից և նման հանգամանքներում կարող է տևել միայն մինչև բուժման ավարտը: Այսպիսի մեկուսացումը պետք է արվի համապատասխան հաստատություններում՝ կլինիկաներում, հիվանդանոցներում, կամ օդանավակայաններում կամ սահմանի վրա գործող հատուկ բժշկական կենտրոններում: Նախնական բուժքննությունից հետո առողջական հիմքով մեկուսացման հետագա երկարացում կարող է կարգադրել միայն որակավորված բժշկական անձնակազմը՝ իրավական վերահսկման ենթակայությամբ:

4.1.3 Ազգային անվտանգության պաշտպանությունը

30. Կառավարությունները կարող են կարիք ունենալ կալանավորելու որոշակի անձի, ով վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության տեսակետից⁵⁰: Չնայած այն բանին, որ ազգային անվտանգության սպառնալիքը սահմանելը հիմնականում կառավարության ոլորտի խնդիր է, կիրառվող միջոցները (ինչպիսին կալանքն է) պետք է համապատասխանեն սույն Ուղեցույցում ամրագրված չափանիշներին, մասնավորապես՝ որ կալանքի կիրառումն անհրաժեշտ է, վտանգին համարժեք, ոչ խտրական և ենթակա է իրավական վերահսկման⁵¹:

4.1.4 Կալանքը չարդարացնող նպատակները

31. Կալանքը, որը չի հետապնդում օրինական նպատակ, հանդիսանում է կամայական⁵²: Ստորև բերվում են մի քանի օրինակներ:

Կալանքը՝ որպես պատիժ անօրինական մուտքի համար և/կամ խոչընդոտում ապաստան հայցելուն

32. Ինչպես նշված է ուղենիշներ 1-ում և 2-ում՝ կալանքը սոսկ այն պատճառով, որ անձն ապաստան է հայցում, միջազգային իրավունքով համարվում է անօրինական⁵³: Ապաստան հայցողների անօրինական մուտքը կամ ներկայությունը երկրում՝ պետությանն ինքնաբերաբար նրան կալանավորելու կամ նրա տեղաշարժման ազատությունն այլ կերպ սահմանափակելու իրավունք չի տալիս: Կալանքը, որն իրականացված է ապագա ապաստան հայցողներին խոչընդոտելու համար, կամ իրենց հայցն արդեն ներկայացրածներին՝ դրանց հետամուտ լինելու հարցում տարհամոզելու նպատակով, չի համապատասխանում միջազգային իրավունքի նորմերին: Ավելին՝ կալանքը թույլատրված չէ որպես, օրինակ՝ քրեական կամ կարգապահական պատժամիջոց՝ երկիր անօրինական մուտքի կամ ներկայության համար⁵⁴: Բացի 1951 թ. կոնվենցիայի Հոդված 31-ով պատժելի լինելուց, սա կարող է հանգեցնել կոլեկտիվ պատժի՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի ոտնահարման հիմքով⁵⁵:

Ապաստան հայցողների կալանքը՝ վտարման հիմքով

33. Որպես ընդհանուր կանոն՝ անօրինական է համարվում ապաստանի հայցման վարույթի ընթացքում ապաստան հայցողների կալանավորումը **վտարման հիմքով**, քանի որ նրանք ենթակա չեն վտարման, քանի դեռ նրանց հայցի կապակցությամբ վերջնական վճիռ չի կայացվել: Վտարման հիմքով կալանքը կարող է իրականացվել միմիայն, երբ ապաստանի հայցը վերջնականորեն քննվել և մերժվել է⁵⁶: Սակայն եթե հիմք կա ենթադրելու, որ

կոնկրետ ապաստան հայցողը ապաստան ստանալու համար դիմել կամ հայց է ներկայացրել սուկ վտարման կամ արտաքսման որոշումը (ինչի հետևանքով նա կհեռացվեր երկրից) հետաձգելու կամ խափանելու նպատակով, իշխանությունները կարող են դիմել հայցի քննման տևողությամբ կալանքի (որպես տվյալ առանձին դեպքի համար անհրաժեշտ և համարժեք միջոց)՝ օրենքից նրա խուսափումը կանխելու նպատակով:

ՈւՂԵՆԻՉ 4.2

Կալանքի կարելի է դիմել միայն այն դեպքերում, երբ դա ճանաչվել է անհրաժեշտ և ողջամիտ բոլոր պարագաներում և համարժեք է օրինական նպատակին

34. Կալանքի անհրաժեշտությունը, ողջամտությունը և համարժեքությունը պետք է քննության առնվեն ամեն առանձին դեպքի համար, ինչպես ի սկզբանե, այնպես էլ ժամանակի ընթացքում (տե՛ս ուղենիշ 6-ը): Անձին կալանքի ենթարկելու անհրաժեշտությունը պետք է գնահատվի կալանքի նպատակի տեսանկյունից (տե՛ս ուղենիշ 4.1-ը), ինչպես նաև առհասարակ բոլոր հանգամանքներում այդ կալանքի ողջամտության տեսանկյունից, ընդ որում վերջինիս առումով կպահանջվի տվյալ անհատի բոլոր առանձնահատուկ կարիքների և հանգամանքների գնահատում (տե՛ս ուղենիշ 9-ը): Համարժեքության ընդհանուր սկզբունքը պահանջում է, որ համամասնություն ապահովվի անձի՝ ազատության և անվտանգության և ազատ տեղաշարժման իրավունքները հարգելու և այդ իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու պետական քաղաքականության նպատակների միջև⁵⁷: Իշխանությունները չպետք է դիմեն միջոցների, որոնք գերազանցում են կոնկրետ դեպքում առաջադրված նպատակին հասնելու համար խիստ որոշակիորեն անհրաժեշտ միջոցները: Հետագա՝ անհրաժեշտության և համարժեքության ճշգրտումները պահանջում են գնահատել, թե արդյոք չկային ավելի պակաս

սահմանափակող կամ հարկադիր միջոցներ (այսինքն՝ այլընտրանքներ կալանքին), որոնք կարելի էր կիրառել տվյալ անհատի նկատմամբ և որոնք արդյունավետ միջոց կլինեին տվյալ պարագայում (տե՛ս ուղենիշ 4.3-ը և Հավելված Ա-ն):

ՈՒՂԵՆԻՇ 4.3

Պետք է քննության առնվեն կալանքի այլընտրանքները


35. Կալանքի այլընտրանքների՝ ներկայանալու պահանջից մինչև ծրագրված համայնքային վերահսկողություն և/կամ գործերի կառավարման ծրագրեր (տե՛ս Ա Հավելված Ա) նկատառումը կալանքի անհրաժեշտության, ողջամտության և համարժեքության ընդհանուր գնահատման մասն է կազմում (տե՛ս ուղենիշ 4.2-ը): Այստեսակ նկատառումն ապահովում է, որ ապաստան հայցողների կալանավորումը լինի ծայրահեղ, այլ ոչ՝ առաջին միջոց: Պետք է տեսանելի լինի, որ կոնկրետ ապաստան հայցողի մասնավոր հանգամանքները հաշվի առնելով՝ չկային նույն նպատակին հասնելու ավելի պակաս հարկադրող, բռնի միջոցներ⁵⁸: Այսպիսով՝ ամեն առանձին դեպքի համար հարկավոր է նախաձեռնել կալանքի այլընտրանքների առկայության, արդյունավետության և համապատասխանության քննություն⁵⁹ :

36. Ինչպես կալանքը, դրա այլընտրանքները ևս պետք է կարգավորվեն օրենքներով և կանոնակարգերով, որպեսզի հնարավոր լինի խուսափել ազատության և ազատ տեղաշարժման կամայական սահմանափակումներից⁶⁰: Իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է այս այլընտրանքների պատշաճ կարգավորում (տե՛ս ուղենիշ 3): Իրավական կանոնակարգերը պետք է մասնավորեցնեն և բացատրեն առկա տարբեր այլընտրանքները, դրանց կիրառումը պայմանավորող չափորոշիչները, ինչպես նաև դրանց ի կատար ածման համար պատասխանատու լիազոր մարմին(ներ)ը⁶¹:

37. Կալանքի այլընտրանքները, որոնք սահմանափակում են ապաստան հայցողների ազատությունը, կարող են ազդել նրանց՝ մարդու իրավունքների վրա և **ենթակա են մարդու իրավունքների չափանիշներին**, այդ թվում՝ ամեն առանձին դեպքում անկախ մարմնի կողմից իրականացվող պարբերական վերանայումների⁶²: Անձինք, որոնք ենթակա են այդ այլընտրանքներին, պետք է ժամանակին հնարավորություն ունենան դիմելու բողոքարկման արդյունավետ մեխանիզմների և միջոցների՝ ըստ կիրառելիության⁶³: Կալանքի այլընտրանքները պետք է գոյություն ունենան ոչ միայն թղթի վրա, այլ պետք է գործնականում կիրառելի լինեն:

38. Կարևոր է նշել, որ կալանքի այլընտրանքները **չպետք է դառնան կալանքի այլընտրանքային ձևեր**, բայց դրանք նաև չպետք է դառնան ազատ արձակման այլընտրանքային ձևեր: Բացի այդ, դրանք չպետք է փոխարինեն նորմալ բաց ընդունելության կարգերը, որոնք չեն ենթադրում ապաստան հայցողների՝ ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակում⁶⁴:

39. Կալանքի այլընտրանքներ մշակելիս կարևոր է, որ պետությունները պահպանեն **նվազագույն միջամտության** սկզբունքը և հատուկ ուշադրության արժանացնեն որոշակի խոցելի խմբերի, օրինակ՝ երեխաների, հղի կանանց, տարեցների, հաշմանդամների կամ տրավմայի ենթարկվածների առանձնահատուկ իրավիճակները (տե՛ս ուղենիշ 9-ը)⁶⁵:



Նկ. 2⁶⁶

40. Կալանքի այլընտրանքները կարող են **տարբեր ձևեր** ընդունել՝ կախված անհատի մասնավոր հանգամանքներից, ներառյալ գրանցումը և/կամ փաստաթղթերը հանձնելը/ ի պահ թողնելը, գրավադրմամբ երաշխավորումը, պարբերաբար ներկայանալու պայմանները, համայնքում տեղավորումը և վերահսկողությունը, էլեկտրոնային վերահսկումը կամ տնային վերահսկումը (այս այլընտրանքների մի մասի բացատրությունները տե՛ս Հավելված Ա-ում): Եթե հեռախոսով ներկայանալը և ժամանակակից այլ տեխնոլոգիաների կիրառումը համարվում են դրական լուծումներ, հատկապես տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց պարագայում⁶⁷, ապա էլեկտրոնային վերահսկման այլ եղանակները, ինչպես օրինակ դաստակի կամ ոտքի ապարանջանները, համարվում են չափազանց կոպիտ նաև այն պատճառով, որ դրանց օգտագործումը զուգորդվում է քրեական խարանով⁶⁸, հետևաբար դրանցից պետք է հնարավորինս ձեռնպահ մնալ:

41. Փորձը ցույց է տալիս, որ այլընտրանքներն ամենից արդյունավետն են, երբ ապաստան հայցողները.

- ստանում են արժանապատիվ, մարդկային և հարգալից վերաբերմունք ապաստանի հայցման ընթացակարգի ողջ տևողության ընթացքում,
- հնարավորինս վաղաժամ տեղեկացվում են կալանավորման այլընտրանքի հետ կապված իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև պայմանների խախտման հետևանքների մասին,
- ապաստանի հայցման ընթացակարգի ողջ ընթացքում իրավաբանական խորհրդատվության հնարավորություն են ունենում,
- ստանում են պատշաճ նյութական օժանդակություն, բնակության տեղ և այլ ընդունելություն կամ ինքնաբավ գոյատևման միջոցների հնարավորություն (ներառյալ աշխատանքի իրավունքը) և
- իրենց հայցի առնչությամբ հնարավորություն են ունենում օգտվելու գործերի անհատականացված վարման ծառայություններից (լրացուցիչ մանրամասները տե՛ս Հավելված Ա-ում)⁶⁹:

42. Փաստաթղթային հիմնավորումը կալանքի այլընտրանքային ծրագրերի անհրաժեշտ առանձնահատկություն է, որն ապահովում է, որ ապաստան հայցողները (և նրանց ընտանիքի բոլոր անդամները) ունենան համայնքում բնակության իրավունքի վկայություններ: Փաստաթղթերը նաև երաշխիք են (վերա)կալանավորման դեմ, դրանք հեշտացնում են բնակարանի վարձակալումը, աշխատանքի ձեռքբերումը, կրթություն ստանալը, առողջապահական և/կամ ըստ անհրաժեշտության այլ ծառայություններից օգտվելը⁷⁰: Կալանքի այլընտրանքների տարբեր ձևերի և լրացուցիչ միջոցների մասին մանրամասները բերված են Հավելված Ա-ում:

ՈՒՂԵՆԻՇ 5

Կալանքը չպետք է խտրական լինի

43. Միջազգային իրավունքն արգելում է անձի կալանքը կամ տեղաշարժման սահմանափակումները ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռային, լեզվական, դավանանքի, քաղաքական կամ այլ այլակարծության, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, ծննդյան կամ այլ կարգավիճակի, ինչպիսիք են ապաստան հայցողի կամ փախստականի կարգավիճակները, հիմքով⁷¹: Սա ուժի մեջ է նաև արտակարգ իրավիճակներում իրավունքների նվազեցման պարագայում⁷²: Պետություններին, եթե նրանք կալանքի ենթարկեն «կոնկրետ ազգության» անձանց, կարող է ռասայական խտրականության մեղադրանք ներկայացվել⁷³: Անձն առնվազն իրավունք ունի բողոքարկելու նման հիմքերով իր կալանավորումը, իսկ պետությունը հարկ կունենա ապացուցելու, որ այս առումով իր քաղաքացիների և ոչ քաղաքացիների միջև, կամ իր քաղաքացիները չհանդիսացողների միջև խտրության համար օբյեկտիվ և հիմնավոր պատճառ է ունեցել⁷⁴:

ՈՒՂԵՆԻՇ 6

Անորոշ ժամանակով կալանքը կամայականություն է, և կալանքի առավելագույն տևողությունն ան- հրաժեշտ է սահմանել օրենքով

44. Ինչպես նշված է ուղենիշ 4.2-ում, համարժեքության ճշգրտումը կիրառվում է թե՛ նախնական՝ կալանքի հրամանի, թե՛ կալանքի ցանկացած երկարացման առնչությամբ: Կալանքի տևողությունը կարող է այլ պարագայում օրինական հանդիսացող որոշումը դարձնել ոչ համարժեք, հետևաբար նաև կամայական: Իմիգրացիոն նպատակներով անորոշ տևողությամբ կալանավորումը կամայականություն է համարվում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքով⁷⁵:
45. Ապաստան հայցողները չպետք է կալանքի տակ գտնվեն ավելի երկար, քան այդ անհրաժեշտ է: Երբ կալանքն արդարացնող հանգամանքներն այլևս չեն գործում, ապաստան հայցողին հարկավոր է անհապաղ ազատ արձակել (ուղենիշ 4.1)⁷⁶:
46. Կամայականությունից պաշտպանված լինելու համար կալանքի առավելագույն տևողությունը պետք է սահմանված լինի պետության օրեստության մեջ: Առանց առավելագույն ժամկետի հստակեցման՝ կալանքը կարող է երկարաձգվել, որոշ դեպքերում՝ անորոշ ժամանակով, հատկապես քաղաքացիություն չունեցող ապաստան հայցողների պարագայում⁷⁷: Կալանքի առավելագույն ժամկետը չի կարելի շրջանցել՝ կարգադրելով ազատ արձակել ապաստան հայցողին, այնուհետև կարճ անց նրան նույն հիմքով նորից կալանավորելու նպատակով:

ՈՒՂԵՆԻՇ 7

Կալանքի կամ դրա երկարացման մասին որոշումները պետք է ենթակա լինեն նվազագույն ընթացակարգային երաշխիքների

47. Կալանքի ենթարկվելու հեռանկարի պարագայում, ինչպես և կալանաքի տակ գտնվելու ընթացքում ապաստան հայցողներն իրավունք ունեն հետևյալ նվազագույն ընթացակարգային երաշխիքների.

- (i) ձերբակալման կամ կալանքի պահին տեղեկացվելու իրենց կալանավորման պատճառների մասին⁷⁸, ինչպես նաև կարգի առնչությամբ իրենց իրավունքների, ներառյալ վերաքննման ընթացակարգերի մասին՝ իրենց համար հասկանալի լեզվով և ձևակերպումներով⁷⁹:
- (ii) տեղեկացվելու իրավաբանական խորհրդատվության՝ իրենց իրավունքի մասին: Նրանց պետք է անվճար իրավաբանական աջակցություն տրամադրվի այն դեպքերում, երբ այն տրամադրվում է նույն իրավիճակում հայտնված քաղաքացիներին⁸⁰, և դա պետք է արվի ձերբակալությունից կամ կալանքից հետո հնարավորինս արագ՝ օգնելով, որ կալանքի ենթարկված անձն իմանա իր իրավունքները: Իրավաբանի և ապաստան հայցողի միջև հաղորդակցությունը պետք է ենթարկվի իրավաբան-վստահորդի միջև գաղտնիության պահպանման սկզբունքին: Իրավաբանները պետք է կարողանան ազատ շփվել իրենց վստահորդի հետ, և նրանց համար պետք է հասանելի լինեն վստահորդի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը: Իրավաբանի և վստահորդի հանդիպումները պետք է կայանան ապահով, մեկուսի պայմաններում:

- (iii) կալանքի մասին որոշման վերանայման նպատակով՝ առանց հետաձգման բերվելու դատական կամ այլ անկախ պաշտոնյայի մոտ: ՏեսակաՆորեն այս վերանայումը պետք է ավտոմատ լինի և կայանա առաջին ատյանում՝ ապաստան հայցողին ձերբակալելու սկզբնական որոշումից 24-28 ժամվա ընթացքում: Վերաքննիչ մարմինը պետք է անկախ լինի կալանքն իրականացրած մարմնից և պետք է ազատ արձակման հրահանգ տալու կամ ազատ արձակման պայմանները փոփոխելու **լիազորություն** ունենա⁸¹:
- (iv) կալանքի սկզբնական վերանայումից հետո պետք է իրականացվեն դատարանի կամ անկախ մարմնի կողմից պարբերական կանոնավոր վերանայումներ՝ կալանքը շարունակելու նպատակահարմարության տեսանկյունից, և ապաստան հայցողը կամ իր ներկայացուցիչն իրավունք ունեն դրանց մասնակցելու: Դրական փորձը ցույց է տալիս, որ կալանքի ենթարկելու իրավունքի մասին դատարանի սկզբնական հաստատումից հետո վերանայումները պետք է տեղի ունենան ամեն յոթ օրը մեկ՝ մինչև առաջին մեկ ամիսը, իսկ այնուհետև ամեն ամիս՝ մինչև կալանքի համար օրենքով սահմանված առավելագույն ժամկետի ավարտը:
- (v) անկախ (iii) և (iv) պարբերություններում նկարագրված վերանայումներից, անձամբ ապաստան հայցողի կամ նրա ներկայացուցչի կողմից ցանկացած ժամանակ կալանքի օրինականությունը դատարանում բողոքարկելու իրավունքը պետք է հարգվի⁸²: Կալանքի օրինականության ապացուցման բեռը դրվում է խնդրո առարկա մարմնի վրա: Ինչպես ընդգծված է ուղենիշ 4-ում, տվյալ մարմինը պետք է ապացուցի, որ կալանավորման համար կա իրավական հիմք, որ կալանքն արդարացված է՝ ելնելով անհրաժեշտության, ողջամտության և համարժեքության սկզբունքներից, և որ տվյալ առանձին դեպքի համար նույն նպատակին ուղղված այլ՝ պակաս հարկադիր միջոցները քննության են առնվել:

- (vi) կալանքի ենթարկված անձանց համար պետք է ապահովվի ապաստանի հայցման ընթացակարգերի հասանելիությունը, և կալանքը չպետք է խոչընդոտի ապաստան հայցողի՝ իր հայցադիմումին հետամուտ լինելու հնարավորությունը⁸³: Ապաստանի հայցման ընթացակարգերի հասանելիությունը պետք է լինի իրատեսական և արդյունավետ, ներառյալ նյութերի տրամադրման համար կալանքի տակ գտնվողին անհրաժեշտ ժամկետները, ինչպես նաև պետք է ապահովվի իրավաբանական և լեզվական օժանդակության հասանելիությունը⁸⁴: Նաև կարևոր է, որ ապաստան հայցողը ճշգրիտ իրավաբանական տեղեկություններ ստանա ապաստանի հայցման գործընթացի և իր իրավունքների մասին:
- (vii) կալանված ապաստան հայցողը պետք է հնարավորություն ունենա կապվելու ՄԱԿ ՓԳՀ-ի հետ, և ՄԱԿ ՓԳՀ-ն պետք է հնարավորություն ունենա կապվելու նրա հետ⁸⁵: Պետք է ապահովվի, ըստ համապատասխանության, այլ մարմինների՝ փախստականների հարցերով զբաղվող պետական մարմնի կամ այլ գործակալությունների, ներառյալ օմբուդսմենի գրասենյակի, մարդու իրավունքների հանձնախմբերի կամ ՀԿ-ների հասանելիությունը: Այս ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու իրավունքը մասնավոր իրավունք է, և նման հաղորդակցման միջոցները պետք է հասանելի լինեն:
- (viii) ապաստան հայցողի, ներառյալ նրա առողջական վիճակի մասին տեղեկությունների առնչությամբ պետք է հարգվեն տվյալների պաշտպանվածության և գաղտնիության սկզբունքները:
- (ix) անգրագիտությունը պետք է բացահայտվի հնարավորինս վաղ, և պետք է գործի մեխանիզմ, որը ոչ գրագետ ապաստան հայցողներին հնարավորություն կտա «հայցումներ անելու», ինչպես օրինակ՝ իրավաբանի, բժշկի, այցելուի հետ հանդիպելու կամ բողոքարկելու վերաբերյալ⁸⁶:

ՈՒՂԵՆԻՇ 8

Կալանքի պայմանները պետք է լինեն մարդկային և արժանապատիվ

48. Կալանքի ենթարկվելով՝ ապաստան հայցողները կալանքի հետևյալ նվազագույն պայմանների իրավունքն ունեն.
- (i) Կալանքը օրինականորեն կարող է ընթանալ միայն պաշտոնապես կալանավայր հանդիսացող վայրերում: Կալանքը ոստիկանական բանտախցերում անընդունելի է⁸⁷:
 - (ii) Ապաստան հայցողների հանդեպ պետք է ցուցաբերվի արժանապատիվ, միջազգային չափանիշներին համապատասխան վերաբերմունք⁸⁸:
 - (iii) Իմիգրացիային առնչվող պատճառներով ապաստան հայցողների կալանքը բնույթով **չպետք է պատժիչ լինի**⁸⁹: Բանտերի, կամ որպես բանտ նախատեսված կամ ծառայող հիմնարկների օգտագործումից պետք է ձեռնպահ մնալ: Եթե ապաստան հայցողները պահվում են նման վայրերում, նրանց պետք է բանտի մյուս կալանավորներից առանձին պահել⁹⁰: Նրանց նկատմամբ քրեական կանոնների կիրառումը (օրինակ՝ բանտային հագուստ կամ ձեռնաշղթաներ կրել պահանջելը) անընդունելի է:
 - (iv) Կալանքի ենթարկվածների անունները և նրանց կալանքի վայրը, ինչպես նաև նրանց կալանքի համար պատասխանատու անձանց անուն-

ները պետք է գրանցվեն **մատյաններում**, որոնք պետք է հեշտությամբ հասանելի լինեն առնչություն ունեցողներին, ներառյալ ազգականներին և իրավաբանական խորհրդատուներին: Սակայն այս՝ տեղեկությունների հասանելիությունը պետք է հաշվի առնի գաղտնիության պահպանման հանգամանքը:

- (v) Կալանքի երկսեռ հիմնարկներում տղամարդիկ և կանայք պետք է **առանձին պահվեն**, բացի եթե նրանք մեկ ընտանիքի անդամներ են: Երեխաները նույնպես պետք է մեծահասակներից առանձին պահվեն, եթե վերջինները նրանց ազգականը չեն⁹¹: Հնարավորության դեպքում պետք է տրամադրվեն ընտանեկան կացարաններ: Ընտանեկան կացարանը նաև հնարավորություն կտա խուսափելու որոշ ընտանիքների անդամների (մասնավորապես՝ երեխաների հետ միայնակ ճամփորդող հայրերին), այլընտրանքի բացակայության պատճառով մեկուսացված կալանքի ենթարկելուց:
- (vi) **Անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի համապատասխան բժշկական օգնություն**, ներառյալ հոգեբանական խորհրդատվությունը: Բժշկական օգնության կարիք ունեցող կալանվածները պետք է փոխադրվեն համապատասխան բուժհիմնարկներ, կամ՝ նման ծառայության առկայության դեպքում, բուժումն ստանան տեղում: Կալանվածների բժշկական և հոգեկան առողջության քննությունը պետք է իրականացվի նրանց ժամանման պահից որքան հնարավոր է՝ շուտ, և այն պետք է իրականացնեն որակավորված բժիշկ մասնագետները: Կալանքի ընթացքում կալանվածները պետք է պարբերաբար իրենց ֆիզիկական և հոգեկան առողջության բժշկական քննություն անցնեն: Կալանվածներից շատերը կալանքի արդյունքում հոգեբանական և ֆիզիկական տրավմա են ապրում, հետևաբար պարբերական բժշկական քննություն պետք է անցնեն նաև այն անձինք, ում մոտ ի սկզբանե նման ախտանշաններ չեն դիտարկվել: Այն դեպքում, երբ կալանքի ընթացքում ի հայտ են գալիս կամ զարգանում են ֆիզիկական կամ

հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, այդպիսի խնդիրներ ունեցող անձանց պետք է տրամադրվի պատշաճ բուժում և խնամք, այդ թվում պետք է հաշվի առնել նաև ազատ արձակման հնարավորությունը:

- (vii) Կալանված ապաստան հայցողները պետք է ցանկության դեպքում **ազգականների, ընկերների, ինչպես նաև կրոնական, միջազգային և/կամ հասարակական կազմակերպությունների** հետ **պարբերաբար շփվելու** (այդ թվում, ըստ հնարավորին՝ հեռախոսով կամ ինտերնետով) և այցելուներ ընդունելու հնարավորություն ունենան: Իրենց և ՄԱԿ ՓԳՀ-ի փոխադարձ հասանելիությունը պետք է երաշխավորվի: Կալանքի վայրերը պետք է նման այցելությունների հնարավորություն ապահովեն: Նման այցելությունները սովորաբար պետք է տեղի ունենան մեկուսի, բացի եթե ապահովության և անվտանգության առնչությամբ հիմնավոր պատճառներով այլ կարգադրություն է արվել:
- (viii) Պետք է օրական փակօթյա և բացօթյա մարզական միջոցառումների միջոցով որևէ ձևի **ֆիզիկական վարժանքների**, ինչպես նաև բացօթյա վայրի, այդ թվում բնական լույսի և թարմ օդի հասանելիության հնարավորություն տրամադրվի: Անհրաժեշտ է նաև կանանց և երեխաներին հարմարեցված և մշակութային առանձնահատկությունները հաշվի առնող նման միջոցառումների առկայությունը⁹² :
- (ix) Պետք է պահպանվի նաև **սեփական կրոնը դավանելու** իրավունքը:
- (x) Կալանքի ենթարկված ապաստան հայցողներին պետք է տրամադրվեն **առաջին անհրաժեշտության պարագաները՝** մահճակալներ, եղանակային պայմաններին համապատասխան անկողին, ցնցուղ, հիգիենայի հիմնական պարագաներ և մաքուր հագուստ: Նրանք պետք է իրավունք ունենան կրելու իրենց սեփական հագուստը և առանձին օգտվելու ցնցուղից և զուգարանից՝ տվյալ հարմարության ապահով շահագործման կարգին համապատասխան:

- (xi) Կալանվածներին պետք է տրամադրվի **աննդարար արժեք ունեցող՝** տարիքին, առողջական վիճակին և մշակութային/կրոնական առանձնահատկություններին համապատասխան **սնունդ**: Հղի կանանց և կերակրող մայրերի համար պետք է ապահովվի համապատասխան սննդակարգ⁹³: Սննդի պատրաստման և ընդունման տարածքները պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ տարրական պահանջներին:
- (xii) Ապաստան հայցողների համար ըստ հնարավորին պետք է հասանելի լինեն **ընթերցանության նյութերը և թարմ տեղեկատվությունը** (օրինակ լրագրերի, ինտերնետի կամ հեռուստատեսության միջոցով):
- (xiii) Ապաստան հայցողներին պետք է իրենց **կալանքի տևողությանը համապատասխան հասանելի լինի կրթությունը կամ միջին մասնագիտական կրթությունը**: Երեխաները, անկախ կարգավիճակից կամ կալանքի տևողությունից, պետք է առնվազն տարրական կրթության հնարավորություն ունենան⁹⁴: Նախընտրաբար երեխաները պետք է հաճախեն կալանավայրից դուրս՝ տեղի դպրոց:
- (xiv) Պետք է խուսափել ապաստան հայցողներին կալանավայրից կալանավայր հաճախ տեղափոխումներից, նաև այն կարևոր պատճառով, որ տեղափոխումները կարող են խոչընդոտել իրավական ներկայացուցիչների հասանելիությունը և նրանց հետ հաղորդակցումը:
- (xv) Պետք է ապահովվի **բողոքարկման** ոչ խտրական **մեխանիզմների** (կամ բողոքների քննարկման կարգի) առկայությունը⁹⁵, երբ բողոքները կարող են ներկայացվել ուղղակիորեն կամ գաղտնիաբար՝ կալանավորման համար պատասխանատու մարմնին, ինչպես նաև անկախ իրավական մարմնին կամ վերահսկող մարմնին: Բողոքների ներկայացման ընթացակարգերը, ներառյալ ժամկետները և դիմում ներկայացնելու ընթացակարգերը, պետք է ի ցույց դրվեն և տարբեր լեզուներով տրամադրվեն **կալավածներին**:

- (xvi) Կալանվածների հետ աշխատող ողջ անձնակազմը պետք է **համապատասխան վերապատրաստում** անցնի, այդ թվում ապաստանի, սեռական և գենդերային բռնության⁹⁶ խնդիրների, տրավմայի և/կամ սթրեսի ախտանշանների տարբերակման, ինչպես նաև կալանքի առնչությամբ՝ փախստականների և մարդու իրավունքների չափանիշների վերաբերյալ: Աշխատակազմի անդամների և կալանվածների հարաբերակցությունը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին⁹⁷, պետք է ստորագրվեն և պահպանվեն համապատասխան վարքականոններ:
- (xvii) Մասնավոր կապալառուների պարագայում արդյունավետ է եղել նրանց վրա կալանվածների բարեկեցության համար օրենքով սահմանված պատասխանատվությունը դնելու փորձը: Սակայն նաև պարզ է, որ պատասխանատու պետական մարմինները, համաձայն փախստականների և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի՝ չեն կարող պայմանագրի կնքման արդյունքում ազատվել իրենց պարտավորություններից, և միջազգային իրավունքով մնում են պատասխանատու: Հետևաբար պետությունները պետք է ապահովեն մասնավոր կապալառուների գործունեության արդյունավետ վերահսկումը, այդ թվում՝ ապահովելով պատշաճ անկախ մոնիթորինգ և հաշվետու մեխանիզմներ, ինչպես նաև պայմանագրերի կամ այլ աշխատանքային համաձայնագրերի խզում, եթե խնամքի պարտավորությունը չի կատարվել⁹⁸:
- (xviii) Կալանքի պայմաններում ծնված երեխաները ծննդից անմիջապես հետո պետք է գրանցվեն համաձայն միջազգային չափանիշների, և նրանց պետք է ծննդյան վկայական տրվի⁹⁹:

ՈՒՂԵՆԻՇ 9

Առանձին ապաստան հայցողների մասնավոր հանգամանքները և կարիքները պետք է հաշվի առնվեն

ՈՒՂԵՆԻՇ 9.1

Տրավմաների և կտտանքների զոհերը

49. Ապաստանի որոնման փաստը, փախուստի դրդած՝ հաճախ տրավմատիկ իրադարձությունները կարող են ապաստան հայցողների մոտ հոգեբանական հիվանդությունների, տրավմայի, ընկճախտի, տագնապի, ագրեսիայի և այլ ֆիզիկական, հոգեբանական և էմոցիոնալ հետևանքների պատճառ հանդիսանալ: Այս գործոնները պետք է հաշվի առնվեն կալանքի ենթարկելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելիս (տե՛ս ուղենիշ 4-ը): Կտտանքների և այլ ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության զոհ դարձած անձինք հատուկ ուշադրության կարիք ունեն, և նրանց սովորաբար չի կարելի կալանքի ենթարկել:
50. Կալանքը կարող է, և փաստացի խորացնում ու մինչև իսկ առաջ է բերում վերոհիշյալ հիվանդությունները և ախտանշանները¹⁰⁰: Այս երևույթները կարող են առկա լինել, նույնիսկ եթե կալանքի պահին տվյալ անհատի մոտ որևէ ախտանշան չի դրսևորվում¹⁰¹: Կալանքի ծանր հետևանքները գիտակցելով՝ անհրաժեշտ է, որպեսզի որակավորված բժիշկ մասնագետները կալանվածի ֆիզիկական և հոգեկան առողջության ի սկզբանե, ապա և պարբերա-

կան գնահատումներ իրականացնեն: Այդ անձանց պետք է տրամադրվի համապատասխան բուժում, իսկ նրանց կալանքի տևողության ընթացքում պետք է պարբերաբար բժշկական հաշվետվություն ներկայացվի:

Ուղեհիշ 9.2

Երեխաները

51. Սույն Ուղեցույցում արծարծված՝ կալանքի վերաբերյալ ընդհանուր սկզբունքներն *a fortiori* վերաբերում են երեխաներին¹⁰², ովքեր սկզբունքորեն երբևէ չպետք է կալանքի ենթարկվեն: Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կոնվենցիան (ԵԻԿ) երեխաների առնչությամբ սահմանում է առանձնահատուկ միջազգային իրավական պարտավորություններ և բերում է երեխաների պաշտպանությանն առնչվող մի շարք ուղղորդող սկզբունքներ.

- Երեխաների, այդ թվում նաև ապաստան հայցող և փախստական երեխաների վրա ներգործություն ունեցող բոլոր գործողություններում առաջնահերթ մտահոգությունը պետք է **երեխայի շահը** լինի (Հոդված 3, Հոդված 22-ի համադրությամբ, ԵԻԿ):
- Չի հանդուրժվում **ոչ մի խտրականություն** ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքի, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, գույքային դրության, առողջական վիճակի, ծննդյան կամ այլ կարգավիճակի հիմքով, կամ երեխայի ծնողների, օրինական խնամակալների կամ ընտանիքի անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած կարծիքների կամ համոզմունքների հիման վրա (Հոդված 2, ԵԻԿ):
- Յուրաքանչյուր երեխա ունի **կյանքի անկապտելի իրավունք** և հնարավոր առավելագույն չափով **գոյատևման և զարգացման իրավունք**

(Հոդված 6, ԵԻԿ):

- Երեխաների համար պետք է երաշխավորվի **իրենց տեսակետն ազատորեն արտահայտելու իրավունքը**, և նրանց տեսակետին պետք է ցուցաբերվի տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն (Հոդված 12, ԵԻԿ)¹⁰³:
- Երեխան ունի **ընտանեկան միասնության** (այլոց թվում՝ Հոդվածներ 5, 8 և 16, ԵԻԿ) և իր կամքին հակառակ ծնողներից չբաժանվելու իրավունք (Հոդված 9, ԵԻԿ): ԵԻԿ Հոդված 20(1)-ը սահմանում է, որ իր ընտանեկան միջավայրից ժամանակավորապես կամ մշտապես բաժանված երեխան, կամ այն երեխան, որի շահերը թույլ չեն տալիս, որ նա այդ միջավայրում մնա, պետք է ունենա պետության կողմից տրամադրվող **հատուկ պաշտպանություն և օժանդակություն**:
- ԵԻԿ Հոդված 20(2)-ը և (3)-ը պահանջում են, որ Մասնակից պետություններն իրենց ազգային օրենքներին համապատասխան՝ այդպիսի երեխայի համար ապահովեն **այլընտրանքային խնամք**: Այդպիսի խնամքը կարող է ներառել, ի թիվս այլ միջոցների, խնամակալության սահմանում, որդեգրում կամ, անհրաժեշտության դեպքում, երեխաների խնամքի համար նախատեսված համապատասխան հաստատություններում տեղավորում: Այս կամ այն լուծումն ընտրելիս պատշաճ կերպով հաշվի է առնվում երեխայի դաստիարակության հաջորդանությունն ապահովելու ցանկալիությունն ու նրա էթնիկական ծագումը, կրոնական ու մշակութային պատկանելությունը և մայրենի լեզուն:
- ԵԻԿ Հոդված 22-ը պահանջում է, որ Մասնակից պետություններն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի փախստականի կարգավիճակ հայցող կամ փախստական համարվող երեխային, ինչպես ծնողների կամ այլ անձանց կողմից ուղեկցվելու, այնպես էլ չուղեկցվելու դեպքում, տրամադրվի **պատշաճ պաշտպանություն և օգնություն**:
- ԵԻԿ Հոդված 37-ը Մասնակից պետություններից պահանջում է, որ պե-

տություններն ապահովեն, որպեսզի **երեխայի կալանքը գործադրվի միայն որպես ծայրահեղ միջոց** և **որքան հնարավոր է՝ կարճ ժամկետով**:

- Այն դեպքում, երբ կալանքի համատեքստում երեխայի կամ երեխաների բաժանումը ծնողներից անխուսափելի է, պետությունը երկու ծնողներին և երեխային պետք է տրամադրի համապատասխան տեղեկատվություն՝ ընտանիքի բացակա անդամի գտնվելու վայրի վերաբերյալ, եթե այդպիսի տեղեկատվությունը վնաս չի հասցնում երեխայի բարեկեցությանը (Հոդված 9(4), ԵԻԿ):

52. Առհասարակ ապաստան հայցող երեխայի, ներառյալ ընտանիքում գտնվող երեխայի հանդեպ գործողություններում պետք է գործի **հոգածության էթիկան**, այլ ոչ՝ հարկադրանքը, և առաջնահերթ մտահոգությունը պետք է լինի երեխայի շահը: Երեխայի ծայրաստիճան խոցելիությունը գերակա է «անօրինական օտարազգի»¹⁰⁴ կարգավիճակի նկատմամբ: Պետությունները պետք է «երեխայի պաշտպանության համապատասխան համակարգերի շրջանակում կիրառեն երեխայի շահի բացահայտման պատշաճ ընթացակարգեր, որոնք կոյուրացնեն երեխայի՝ առանց խտրականության պատշաճ մասնակցությունը, որոնց պարագայում երեխայի կարծիքը իր փարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ կերպով հաշվի կառնվի, ուր ընդգրկված են համապատասխան ոլորտներում մասնագիտական փորձ ունեցող որոշում կայացնողներ, և ուր լավագույն լուծումը գտնելու նպատակով ծանրութեթև են արվում այդ առնչությամբ բոլոր գործոնները»¹⁰⁵:

53. Այն դեպքերում, երբ **երեխաներն ուղեկցում են իրենց ծնողներին**, խնամքի բոլոր համապատասխան այլընտրանքային եղանակները պետք է հաշվի առնվեն, ամենից առաջ՝ երեխայի բարեկեցության, այդ թվում նաև ֆիզիկական և մտավոր զարգացման վրա կալանքի՝ փաստերով ամրագրված կորստաբեր ազդեցության պատճառով: Երեխաների՝ իրենց ծնողների կամ խնամակալների հետ կալանավորումը պետք է հաշվի առնի, այլոց թվում՝ ընտանիքի իրավունքը, ընտանիքի՝ որպես ամբողջություն, մասնավոր կյանքը,

երեխայի համար կալանավայրի պայմանների համապատասխանությունը¹⁰⁶ և երեխայի շահը:

54. Որպես ընդհանուր կանոն՝ **առանց ուղեկցության, հարազատներից բաժանված երեխաները** չպետք է կալանքի ենթարկվեն: Կալանքը չի կարող արդարացվել, եթե հիմնված է սուսկ այն փաստի վրա, որ երեխան առանց ուղեկցության է կամ հարազատներից բաժանված է, և ոչ էլ, երբ հիմնված է նրա միգրացիոն կամ բնակության կարգավիճակի վրա¹⁰⁷: Հնարավորության դեպքում երեխաները պետք է հանձնվեն ընտանիքի այն անդամների խնամքին, ովքեր արդեն բնակություն ունեն ապաստանած երկրում: Այն դեպքերում, երբ սա հնարավոր չէ, երեխայի խնամքով զբաղվող լիազոր մարմինները պետք է խնամքի այլընտրանքներ գտնեն, ինչպես օրինակ՝ խնամատարների ընտանիքում կամ մանկական խնամքի տներում տեղավորումը, որոնք կապահովեն երեխայի պատշաճ վերահսկումը: Մանկական տները և խնամատարները պետք է ապահովեն երեխայի պատշաճ զարգացումը (ֆիզիկական և մտավոր), քանի դեռ քննության են առնվում լուծումների ավելի տևական տարբերակներ¹⁰⁸: Առաջնահերթ նպատակը պետք է լինի երեխայի շահը:
55. Ապաստան հայցող երեխաների տարիքի ճշգրիտ որոշումը շատ հանգամանքներում առանձնահատուկ բարդ խնդիր է, որը պահանջում է մարդու իրավունքների չափանիշներին ներդաշնակ գնահատման մեթոդների կիրառում¹⁰⁹: Տարիքի ոչ ճշգրիտ որոշումը կարող է հանգեցնել երեխայի կամայական կալանքի¹¹⁰: Այն կարող է հանգեցնել նաև երեխաների տեղավորմանը մեծահասակների հետ: Անհրաժեշտ է տարիքային և սեռային առանձնահատկություններին համապատասխան կացարանների տրամադրման հնարավորություն ստեղծել:
56. Կալանքի ենթարկված երեխաներն օգտվում են նույն **նվազագույն ընթացակարգային երաշխիքներից**, ինչ և չափահասները, սակայն դրանք պետք է հարմարեցված լինեն երեխաների առանձնահատուկ կարիքներին (տե՛ս ուղենիշ 9-ը): Առանց ուղեկցության կամ հարազատներից բաժանված երե-

խաների համար պետք է նշանակվի անկախ, որակավորում ունեցող **խնամակալ, ինչպես նաև իրավաբանական խորհրդատու**¹¹: Կալանքի տևողության ընթացքում երեխաներն ունեն **կրթություն ստանալու իրավունք**, որը նախընտրաբար պետք է իրականացվի կալանքի վայրից դուրս, որպեսզի ազատ արձակումից հետո նրանց կրթությունը շարունակվի: Պետք է պայմաններ ապահովվեն նրանց (նաև այլ երեխաների հետ) խաղի և ակտիվ հանգստի համար, ինչը խիստ կարևոր է երեխայի մտավոր զարգացման համար, բացի այդ՝ կօզնի ձերբազատվել սթրեսից և տրավմաներից (տե՛ս նաև ուղենիշ 8-ը):

57. Պետք է գործադրվեն բոլոր ջանքերը, ներառյալ ապաստանի տրամադրման գործընթացի առաջնահերթայնացումը, որպեսզի հնարավորություն ստեղծվի երեխաներին անհապաղ կալանքից ազատելու և նրանց պատշաճ պայմաններում տեղավորելու համար¹²:

Ուղենիշ 9.3

Կանայք

58. Որպես ընդհանուր կանոն՝ հղի կանայք և կերակրող մայրերը, որոնցից թե՛ մեկը, թե՛ մյուսն առանձնահատուկ կարիքներ ունեն, կալանքի չպետք է ենթարկվեն¹³: Նրանց համար այլընտրանքային պայմանները պետք է հաշվի առնեն կանանց առանձնահատուկ կարիքները, ներառյալ՝ պաշտպանումը սեռական և սեռային (զենդեբային) հիմքով բռնությունից և շահագործումից¹⁴: Կալանքի այլընտրանքներ գտնելն առավել ևս կարևոր է, երբ կալանավայրում կանանց և/կամ ընտանիքներին առանձնացված պայմաններ տրամադրելու հնարավորություն չկա:

59. Այն դեպքում, երբ կին ապաստան հայցողների կալանքն անխուսափելի է, պահանջվում են կանանց առանձնահատուկ հիգիենիկ կարիքները հաշվի

առնող հարմարություններ և պարագաներ¹¹⁵: Պետք է խրախուսվի կին պահպանների և վերակազմակերպիչ ընդգրկումը¹¹⁶: Կալանքի ենթարկված կանանց հետ աշխատող անձնակազմի բոլոր անդամները պետք է հատուկ վերապատրաստում անցնեն կանանց՝ սեռային առանձնահատկություններով պայմանավորված կարիքների և կանանց իրավունքների վերաբերյալ¹¹⁷:

60. Կալանված կանայք, ովքեր հայտնում են չարաշահման կամ դաժան վերաբերմունքի փաստի մասին, պետք է անմիջապես պաշտպանություն, աջակցություն և խորհրդատվություն ստանան, իսկ նրանց բողոքները պետք է հետաքննվեն իրավազոր և անկախ մարմինների կողմից, լիովին հարգելով գաղտնիության սկզբունքը, ներառյալ այն դեպքերում, երբ կանայք կալանքի տակ են գտնվում ամուսինների/ընկերների/ազգականների հետ միասին: Պաշտպանության միջոցները պետք է առանձնապես հաշվի առնեն վրեժի ռիսկի գործոնը¹¹⁸:

61. Կալանված կանայք, ովքեր ենթարկվել են սեռական բռնության, պետք է ստանան համապատասխան բժշկական օգնություն և խորհրդատվություն, ներառյալ՝ որպես հետևանք, հղիության պարագայում, և նրանց պետք է տրամադրվի ֆիզիկական և հոգեկան առողջության համար պահանջվող բժշկական խնամք, օժանդակություն և իրավաբանական օգնություն¹¹⁹:

ՈւՐԵՆԻՇ 9.4

Մարդկանց թրաֆիքինգի իրական կամ հավանական զոհերը

62. Թրաֆիքինգի կամ կրկնաթրաֆիքինգի կանխումը չի կարող կալանքի լիարժեք հիմք հանդիսանալ, բացի եթե այն արդարացված է տվյալ առանձին դեպքի համար (տե՛ս ուղենիշ 4.1-ը): Նման զոհերի կամ հավանական զոհերի, մասնավորապես՝ երեխաների համար երբեմն անհրաժեշտ է կալանքի

այլընտրանքների կիրառումը, ներառյալ ապահով տներում տեղավորումը և խնամքի տրամադրման այլ միջոցները¹²⁰:

Ուղեւոր 9.5

Հաշմանդամություն ունեցող ապաստան հայցողները

63. Հաշմանդամություն ունեցող ապաստան հայցողները պետք է առանց խտրականության օգտվեն սույն Ուղեցույցում ամրագրված իրավունքներից: Սա կարող է պետություններից պահանջել «ողջամիտ փոփոխություններ կատարել» կալանքի՝ իրենց քաղաքականության և գործող կարգի մեջ, դրանք համապատասխանեցնելով այդ անձանց առանձնահատուկ պահանջներին և կարիքներին¹²¹: Կամայական կալանքից խուսափելու համար անհրաժեշտ է այս անձանց արագ և համակարգված բացահայտում և գրանցում¹²²: Բոլոր այլընտրանքային լուծումները պետք է հաշվի առնեն նրանց հատուկ կարիքները, օրինակ ֆիզիկական սահմանափակումներով անձանց համար կարող է գործել հեռախոսային հաշվետվության կարգ: Որպես ընդհանուր կանոն՝ տևական ֆիզիկական, մտավոր, հոգեկան և զգայական խաթարումներով¹²³ ապաստան հայցողները չպետք է կալանքի ենթարկվեն: Բացի այս, իմիգրացիոն վարույթները պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ներառյալ այն դեպքերում, երբ սա վերաբերում է նրանց տեղաշարժման ազատության իրավունքն ապահովելուն¹²⁴:

Ուղեւոր 9.6

Տարեց ապաստան հայցողները

64. Իրենց տարիքով, խոցելիությամբ, պակաս շարժունակությամբ, հոգեբանական կամ ֆիզիկական առողջությամբ կամ այլ հանգամանքներով պայմանավորված՝ տարեց ապաստան հայցողները կարող են հատուկ խնամքի և օժանդակության կարիք ունենալ: Առանց նման խնամքի և օժանդակության՝ նրանց կալանքը կարող է անօրինական համարվել: Այլընտրանքային լուծումները պետք է հաշվի առնեն նրանց առանձնահատուկ հանգամանքները, ներառյալ ֆիզիկական և հոգեկան բարեկեցությունը¹²⁵:

Ուղեւոր 9.7

Լեւբուհի, համասեռամուլ, բիսեքսուալ, տրանսգենդերային կամ միջգենդերային ապաստան հայցողները

65. Միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի լեւբուհի, համասեռամուլ, բիսեքսուալ, տրանսգենդերային կամ միջգենդերային ապաստան հայցողների կալանքի պարագայում նրանք պաշտպանված լինեն բռնության, կոպիտ վերաբերմունքի, ֆիզիկական կամ սեռական չարաշահման վտանգից, որ նրանց համար անհրաժեշտության դեպքում հասանելի լինի պատշաճ բժշկական խնամք և խորհրդատվություն, և որ կալանավայրերի աշխատակազմը և պետական և մասնավոր սեկտորի այլ պաշտոնյաները, ովքեր գործ ունեն կալանավայրերի հետ, վերապատրաստված և որակավորված լինեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և հավասարության ու անխտրականության սկզբունքներին համապատասխան, ներառյալ սեռական ուղղվածության և սեռային ինքնության առումով¹²⁶: Այն դեպքում, երբ

կալանավայրը չի կարող երաշխավորել այս անձանց անվտանգությունը, պետք է դիտարկվեն նրանց ազատ արձակումը կամ այլընտրանքային լուծումները: Այս առումով մեկուսացված կալանքն այս անձանց պաշտպանությունը կազմակերպելու կամ երաշխավորելու ընդունելի ձև չի հանդիսանում:

ՈՒՂԵՆԻՇ 10

Կալանքը պետք է ենթակա լինի անկախ մոնիթորինգի և ստուգման

66. Իմիգրացիոն կալանքի և միջազգային իրավական սկզբունքների համապատասխանությունն ապահովելու համար կարևոր է, որ իմիգրացիոն կալանավորման կենտրոնները բաց լինեն անկախ միջազգային և ազգային կառույցների և մարմինների մանրակրկիտ գնման և մոնիթորինգի համար¹²⁷: Սա կարող է ենթադրել պարբերական այցելություններ կալանվածներին՝ հարգելով նրանց մասնավոր կյանքի և գաղտնիության սկզբունքները, կամ նախապես չհայտարարված՝ ստուգման այցելություններ: Դաշնագրի պարտավորությունների և պաշտպանության համապատասխան միջազգային չափանիշների համաձայն՝ պետք է ապահովվի հասանելիությունը ՄԱԿ ՓԳՀ-ի¹²⁸ և կալանքի և մարդկային վերաբերմունքի առնչությամբ մանդատ ունեցող այլ համապատասխան միջազգային և տարածաշրջանային մարմինների¹²⁹ համար: Պետք է ըստ իրադրության ապահովվի նաև մոնիթորինգի նպատակով հասանելիությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և ՀԿ-ների համար: Անկախ և թափանցիկ գնահատումն ու մոնիթորինգը ևս ցանկացած այլընտրանքային ծրագրի կարևոր մասն են կազմում¹³⁰:

67. Կին կալանվածների՝ կալանքի պայմանների և նրանց հանդեպ վերաբերմունքի մոնիթորինգի համար մոնիթորինգ իրականացնող մարմինների կազմում պետք է ընդգրկված լինեն կանայք¹³¹:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

Կալանքի այլընտրանքները

Գոյություն ունեն կալանքի մի շարք այլընտրանքներ, որոնք ներկայացված են ստորև: Դրանց մի մասը կիրառվում են համադրությամբ, և, ինչպես նշված է հիմնական տեքստում, մի մասն ավելի խիստ սահմանափակումներ են դնում ազատ տեղաշարժման իրավունքի վրա, քան մյուսները: Ստորև ներկայացված ցանկը համապարփակ չէ:

- (i) **Փաստաթղթերի հանձնումը.** ապաստան հայցողից կարող է պահանջվել՝ հանձնել իր ինքնության և/կամ ճամփորդական փաստաթղթերը (օրինակ անձնագիրը): Նման դեպքերում այդ անձանց պետք է տրամադրվեն փոխարինող փաստաթղթեր, որոնք հաստատում են տարածքում իրենց գտնվելու և/կամ համայնքում բնակվելու օրինականությունը¹³²:
- (ii) **Ներկայանալու պայմանները.** որոշ ապաստան հայցողների կարող է առաջադրվել՝ կարգավիճակի սահմանման ընթացակարգի տևողության ընթացքում իմիգրացիոն կամ այլ մարմիններ (օրինակ ոստիկանություն) պարբերաբար ներկայանալու պայմանը: Այս պայմանը կարող է պահանջել պարբերական ներկայացում, կամ ներկայացումը կարող է համապատասխանեցվել լսումների և/կամ այլ պաշտոնական պայմանավորվածությունների օրերին: Համայնքային վերահսկման շրջանակներում հնարավոր է, որ մարմինը, ուր ապաստան հայցողը

պետք է ներկայանա, հանդիսանան ՀԿ-ները կամ մասնավոր կապալառուները (տես vii):

Սակայն ներկայանալու չափից դուրս խիստ պայմանները կարող են հանգեցնել համագործակցությունից հրաժարման և կարող են դրդել, որ համագործակցության պատրաստ անձը հրաժարվի կատարել առաջադրված պայմանները: Օրինակ՝ ներկայանալու այնպիսի պայմանը, որը պահանջում է, որ անձը և/կամ իր ընտանիքը մեծ տարածություններ անցնի և/կամ դրա ծախսերն ինքը կատարի, կարող է հանգեցնել այն բանին, որ անձը, չկարողանալով բավարարել տվյալ պայմանը, դադարի համագործակցել, և արդյունքում հանգեցնի տնտեսական կարգավիճակի հիմքով խտրականության¹³³:

Ներկայանալու պարտավորության հաճախականությունը պետք է ժամանակի ընթացքում նվազի՝ ինքնաբերաբար կամ համաձայն դիմումի, այսպիսով ապահովելով, որ պարտադրված պայմանները շարունակեն համապատասխանել անհրաժեշտության, ողջամտության և համարժեքության սկզբունքներին: Ներկայանալու պայմանների ցանկացած խստացում կամ հավելյալ որևէ սահմանափակում պետք է համարժեք լինի հետապնդվող նպատակին և հիմնված լինի տվյալ անձի կողմից օրինազանցության ռիսկի անաչառ և անհատականացված գնահատման վրա:

- (iii) **Սահմանված բնակություն.** ապաստան հայցողները կարող են ազատ արձակվել՝ պայմանով, որ պետք է բնակվեն որոշակի սահմանված հասցեով կամ որոշակի վարչական տարածքում, քանի դեռ իրենց կարգավիճակը չի որոշվել: Նրանցից կարող է պահանջվել նաև, որ իրենց համար սահմանված վարչական տարածքից դուրս գալու համար նախապես դիմեն թույլտվության, կամ միևնույն վարչական տարածքում հասցեի փոփոխության մասին իրազեկեն իշխանություններին: Պետք է ամեն կերպ խրախուսել այնպիսի բնակությունը, որը նպաստում է ընտանիքների վերամիավորմանը կամ ազգականներին¹³⁴ և/կամ

օժանդակման այլ ցանցերին մոտ գտնվելուն: Բնակության պայման կարող է լինել նաև բնակությունը սահմանված բաց կացարաններում կամ ապաստարաններում՝ համաձայն այդ կենտրոններում գործող կանոնների (տե՛ս (iv)):

- (iv) **Բնակությունը բաց կամ կիսաբաց կացարաններում կամ ապաստարան-կենտրոններում.** սահմանված բնակության (տե՛ս վերը՝ (iii)) մեկ այլ տարբերակ են՝ ուղղորդումը բաց կամ կիսաբաց կացարաններ կամ ապաստարան-կենտրոններ՝ տվյալ հասցեով բնակության պայմանով: Կիսաբաց կենտրոնները կարող են, իրենց վարչական կառավարումն արդյունավետ դարձնելու նպատակով, որոշ կանոններ սահմանել, ինչպես օրինակ՝ պարետային ժամը և/կամ կենտրոնից դուրս գալիս և ներս մտնելիս նշում կատարելը: Սակայն կենտրոնի ներսում և դրսում ընդհանուր առմամբ տեղաշարժման ազատությունը պետք է հարգվի, ինչը կերաշխավորի, որ այն չվերաձվի յուրօրինակ կալանավայրի:
- (v) **Երաշխավորի/երաշխավորության տրամադրում.** մեկ այլ տարբերակով ապաստան հայցողները պետք է երաշխավոր/երաշխավորություն ներկայացնեն, որը պատասխանատու կլինի պաշտոնական հանդիպումներին և լսումներին իրենց մասնակցության, կամ ըստ իրենց ազատ արձակման պայմաններով սահմանված կարգի՝ այլ կերպ ներկայանալու համար: Չներկայանալը կարող է հանգեցնել տուգանքի կամ պատժի, ամենից հավանականը՝ երաշխավորից գումար գանձելուն: Երաշխավոր կարող է լինել, օրինակ, ընտանիքի անդամը, հասարակական կազմակերպություն կամ համայնքը ներկայացնող որևէ խումբ:
- (vi) **Գրավի դիմաց ազատ արձակումը.** այս տարբերակն արդեն կալանված ապաստան հայցողներին հնարավորություն է տալիս դիմելու՝ գրավի դիմաց ազատ արձակման համար: Նրանց վրա կարող են դրվել վերը թվարկված (ii)-(v) բոլոր պայմանները: Որպեսզի գրավադրմամբ

ազատ արձակումն իսկապես հասանելի լինի ապաստան հայցողների համար՝ ցանկալի է, որ այդ առնչությամբ լուումները լինեն ինքնաբերական: Մյուս կողմից՝ ապաստան հայցողները պետք է տեղեկացվեն, որ իրենք ևս պետք է հասանելի լինեն: Գրավադրմամբ ազատ արձակումը հասանելի դարձնելու կարևոր պայման է իրավաբանական խորհրդատվության հասանելիությունը: Գրավի չափը պետք է ողջամիտ լինի՝ հաշվի առնելով ապաստան հայցողների առանձնահատուկ պայմանները, և չպետք է այնքան մեծ լինի, որ գրավադրմամբ ազատ արձակման համակարգը սոսկ տեսական բնույթ ունենա:

Գրավադրման և երաշխավորների համակարգերը միտում ունեն խտրության ենթարկելու սահմանափակ միջոցներ ունեցող ապաստան հայցողներին կամ նրանց, ովքեր համայնքում նախնական կապեր չեն ունեցել: Հետևաբար այնտեղ, ուր գործում են գրավադրման/երաշխավորի համակարգերը, կառավարություններին առաջարկվում է դիտարկել այնպիսի տարբերակներ, որոնք հենց ապաստան հայցողի կողմից որևէ դրամական մուծում չեն պահանջում: Օրինակ, նա կարող է ազատ արձակվել որևէ ՀԿ-ի գրավադրությամբ՝ կա՛մ եթե ՀԿ-ն է հանդես գալիս որպես երաշխավոր (տե՛ս վերը), կա՛մ ըստ կառավարության հետ համաձայնության¹³⁵: Այս՝ ՀԿ-ների և այլոց ներգրավվածությամբ համակարգերում ևս պետք է գործեն չարաշահումների և շահագործման դեմ երաշխիքներ, ինչպիսիք են ստուգումները և վերահսկումը: Բոլոր դեպքերում պետք է գնահատվի, թե գրավի վճարումը կամ երաշխավորի տիտղոսը որքանով են իրոք անհրաժեշտ՝ տվյալ առանձին դեպքում օրենքի կատարումն ապահովելու համար: Ապաստան հայցողներից շարունակաբար գրավի վճարում կամ երաշխավորի անվանում պահանջելը և այս բանն անել չկարողանալու արդյունքում կալանքի ենթարկելը (կամ դրա շարունակումը) կնշանակեն, որ այս համակարգն իրեն չի արդարացնում և հաշվի չի առնում անհատական հանգամանքները:

(vii) Համայնքային վերահսկում. Համայնքային վերահսկումը վերաբերում է գործողությունների մի ընդարձակ շարքի, որոնց պարագայում անձինք կամ ընտանիքներն ազատ բնակություն են հաստատում համայնքում՝ որոշակի աջակցության և ուղղորդման (այն է՝ «վերահսկման») տրամադրմամբ: Աջակցությունը կարող է ենթադրել օգնություն՝ տվյալ վայրում բնակարան, դպրոց կամ աշխատանք գտնելու հարցում, կամ, այլ դեպքերում՝ ապրանքի, սոցապահովության վճարումների կամ այլ ծառայությունների ուղղակի տրամադրում: Այստեսակ «վերահսկումը» կարող է իրականացվել բաց կամ կիսաբաց ապաստարանների պայմաններում կամ համապատասխան ծառայություն մատուցողի գրասենյակում, մինչ անձը համայնքում ազատ բնակություն ունի: Վերահսկումը կարող է ապաստան հայցողի ազատ արձակման պայման լինել և հետևաբար կարող է ենթադրել ուղղակի հաշվետվություն ծառայություն մատուցողին կամ առանձին՝ իմիգրացիոն կամ այլ համապատասխան մարմիններին (տես ii):

Վերահսկումը կարող է լինել ըստ ցանկության՝ երբ անձինք տեղյակ են պահվում իրենց հասանելի ծառայությունների մասին, բայց պարտավոր չեն դրանց մասնակցել: Համայնքային վերահսկումը կարող է նաև վերաբերել գործի կառավարմանը (տես հաջորդիվ):

Հավելյալ միջոցներ և այլ նկատառումներ

Գործի կառավարում

Գործի կառավարումը ճանաչվել է որպես կալանքի այլընտրանքային մի շարք քաղաքականությունների և ծրագրերի կարևոր բաղադրիչ, ինչպես նաև ապաստարանային արդյունավետ համակարգերի բնութագրական մաս: Գործի կառավարումը կարգավիճակի սահմանման գործընթացում անձանց և նրանց ապաստանի հայցմանն օժանդակման և կառավարման

ռազմավարություն է, որի հիմքում ընկած է տեղյակ որոշումների կայացումը, կարգավիճակի՝ ժամանակին և արդարացի տրամադրումը, լուծումներ գտնելու ավելի կատարյալ մեխանիզմները և խնդրո առարկա անձանց բարորությունը¹³⁶: Նման քաղաքականությունները հանգեցրել են ապաստանի տրամադրման գործընթացում կառուցողական մասնակցության և համագործակցության/օրենքին հետևելու տոկոսի աճի:

Գործի կառավարումը համալիր գործընթացի մաս է, որն սկսվում է ապաստանի տրամադրման վաղ փուլում և շարունակվում է մինչև փախստականի կարգավիճակի կամ օրինական կացության այլ ձևի շնորհում կամ արտաքսման իրականացում: Գաղափարը հետևյալն է՝ յուրաքանչյուր ապաստան հայցողի կցվում է «գործի կառավարիչ», որը պատասխանատու է նրանց ողջ գործի, այդ թվում ապաստանի տրամադրման գործընթացի (ինչպես նաև միգրացիոն և/կամ վերադարձի այլ գործընթացների՝ ըստ համապատասխանության), ինչպես նաև իրենց ազատ արձակման պայմանների և չհամագործակցելու հետևանքների մասին հստակ և հետևողական տեղեկատվության ապահովման համար: Սա անկախ գործընթաց է, բայց ճանաչվել է որպես կալանքի այլընտրանքային ծրագրերի արդյունավետ տարր: Թափանցիկությունը, տեղեկությունների ակտիվ փոխանակումը և բոլոր ներգրավված կողմերի արդյունավետ համագործակցությունը նաև նպաստել են խնդրո առարկա անձանց շրջանում վստահության ձեռքբերմանը և օրենքին հետևելու տոկոսի աճին¹³⁷:

Գործադրվող հմտությունները և աշխատակազմը

Գործադրվող հմտությունները և աշխատակազմի որակավորումը կարող են նպաստել կամ խափանել այլընտրանքների հաջող իրականացումը: Աշխատակազմի ընտրությունը և մասնագիտական պատրաստումը պետք է հավուր պատշաճի իրականացվի՝ ներառելով հատուկ վերապատրաստում, դասընթացներ և/կամ վկայականի առկայություն¹³⁸: Վարքականոնները կամ աշխատակազմի վարքի վերաբերյալ այլ կանոնակարգերը կարող են կա-

լանքի միջոցների կամ կալանքի այլընտրանքների կարևոր բնութագրական կողմ հանդիսանալ:

Հասարակական կազմակերպությունների կամ մասնավոր կապալառուների կողմից իրականացվող այլընտրանքները

Եթե այլընտրանքներն իրականացնում են **հասարակական կամ մասնավոր կազմակերպությունները**, հարկավոր է կառավարական համապատասխան մարմնի հետ իրավական համաձայնագրի կնքում: Նրանց աշխատանքի համապատասխանությունը ենթակա է կառավարության, ազգային անկախ տեսչությունների և/կամ միջազգային կազմակերպությունների կամ մարմինների (ինչպես օրինակ՝ ՄԱԿ ՓԳՀ-ի) պարբերական մոնիթորինգին: Համաձայնագիրը պետք է սահմանի յուրաքանչյուր մարմնի դերը և պարտականությունները, ինչպես նաև բողոքարկման և ստուգումների կարգը և նախատեսի պայմանների չկատարման պարագայում համաձայնագրի խզում: Կարևոր է, որպեսզի համաձայնագիրը պատրվակներ չտրամադրի ավելի սահմանափակող միջոցների կիրառման համար, քան այն, ինչը խստորեն անհրաժեշտ է: Անկախ այլընտրանքների կազմակերպման և իրականացման գործում հասարակական կամ մասնավոր կազմակերպությունների դերից, և մինչև իսկ անկախ այն բանից, որ արդյունավետ փորձն այս միավորներին կարող է օրենքով պարտավորեցնել՝ պատասխանատվություն կրել կալանվածների բարօրության համար, պետություն՝ նաև է միջազգային իրավունքով պատասխանատու հանդիսանում մարդու իրավունքների ապահովումը և փախստականների մասին օրենքների չափանիշների պահպանումը երաշխավորելու հարցում: Կարևոր է հիշել, որ ազատության և ազատ տեղաշարժման սահմանափակման մասին որոշումը երբեք չի կարող կայացվել ոչ պետական մարմնի կողմից¹³⁹:

Օրենքի չկատարման պարագայում դրա հարկադիր կիրառման գործընթացում հասարակական և մասնավոր կազմակերպությունների դերերը (օրինակ՝ բացակայությունների կամ թաքնվելու մասին իշխանությունների

իրագեկումը՝ այդ ուղղությամբ հետագա քայլեր ձեռնարկելու համար) տարբեր են: Սակայն պարտադիր չէ, որ այս կազմակերպությունները մասնակցեն օրենքի հարկադիր կիրառման գործընթացին:

Հղումներ

- 1 Միավորված ազգերի մարդու իրավունքների հանձնաժողով (ՄԻՀ), ԲԲԻԴ ընդհանուր մեկնաբանություն N. 15, *Օտարների կարգավիճակն ըստ դաշնագրի*, 11 ապրիլի, 1986, պարբ. 5՝ <http://www.unhcr.org/refworld/docid/45139acfc.html> կայքում: Տե՛ս նաև *Մուսուլման ընդդեմ Բելգիայի*, (1991), Եվրոպայի Խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ), հայց N. 26/1989/186/246, պարբ.43, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b7018.html> կայքում և *Վիվարաջա և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության*, (1991), ՄԻԵԴ, հայց N. 45/1990/236/302-306, պարբ. 103, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b7008.html> կայքում:
- 2 Տե՛ս մասնավորապես ՄԱԿ-ի՝ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Գերագույն հանձնակատարի ծրագրի գործադիր կոմիտե (Գործկոմ), *Անհատական ապաստանների համակարգի համարեքսպում ապաստան հայցողների ընդունման վերաբերյալ եզրակացություն*, No. 93 (LIII) – 2002, <http://www.unhcr.org/refworld/docid/3dafdd344.html> կայքում: Գործկոմի բոլոր եզրակացություններն ըստ թեմաների կարելի է գտնել նաև՝ ՄԱԿ ՓԳՀ, *Գործադիր կոմիտեի եզրակացությունների թեմատիկ ամփոփագրում*, 6-րդ հրատարակություն, 2011 թ. հունիս, <http://www.unhcr.org/refworld/docid/3dafdd344.html> կայքում:
- 3 ՄԱԿ ՓԳՀ, *Փախստականների պաշտպանությունը և խառը միգրացիան. 10 կետից գործողությունների պլան*, 2011 փետրվար, <http://www.unhcr.org/refworld/docid/4d9430ea2.html> կայքում:
- 4 Ա. Էդվարդս, *Վերադարձ հիմունքներին. Անձի՝ ազատության և անվտանգության իրավունքը և «Կալանքի այլընտրանքները» փախստականների, ապաստան հայցողների, ապաքաղաքացիների և այլ միգրանտների համար*, ՄԱԿ ՓԳՀ-ի իրավական և պաշտպանության քաղաքականության հետազոտության շարք, PPLA/2011/01.Rev.1, 2011 ապրիլ, էջ 1 («Չկա փորձի վրա հիմնված որևէ վկայություն, որ կալանքի ենթարկվելու հետանկարը կանխում է անկանոն միգրացիան, կամ որ մարդկանց հետ է պահում ապաստան հայցելուց») (Էդվարդս, Վերադարձ հիմունքներին. անձի՝ ազատության և անվտանգության իրավունքը և

«կալանքի այլընտրանքները»), <http://www.unhcr.org/refworld/docid/4dc935fd2.html> կայքում և վերահավաստված Միավորված ազգերի՝ Միգրանտների մարդու իրավունքների առնչությամբ հատուկ զեկուցող Ֆրանսուա Կրեայոյի զեկույցում, A/HRC/20/24, 2 ապրիլի, 2012, պարբ. 8, <http://www.unhcr.org/refworld/docid/502e0bb62.html> կայքում:

- 5 Հարկավոր է հստակ տարբերակել այլ երկրներում ապաստան փնտրող՝ քաղաքացիություն չունեցող անձանց և իրենց «սեփական երկրում» բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես որ նրանք սահմանված են 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ), Հոդված 12(4)-ում: Այս վերջիններն այն անձինք են, ովքեր որևէ պետության, հաճախ՝ իրենց ծննդյան երկրի, մշտական բնակիչներն են հանդիսանում: Իրենց «սեփական երկրում» լինելով և պետության օրենքով ունենալով որոշակի կարգավիճակ, նրանք այնտեղ մուտք գործելու և մնալու իրավունք ունեն: Այս երկու խմբերի պարագայում կալանքի ընդունելիության հիմնավորման կանոնները տարբեր են (ուղենիշ 4.1): Առաջին խմբի պարագայում գործում են սույն Ուղեցույցում նշված կանոնները: Սակայն իրենց «սեփական երկրում» բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց կալանքի այսպիսի հիմնավորումը կարող է շատ դեպքերում հանգեցնել կամայական և անօրինական (այդ թվում նաև անորոշ ժամանակով) կալանքի: Կալանքի և քաղաքացիություն չունեցող անձանց մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ ՄԱԿ ՓԳՀ, *Ապաքաղաքացիության վերաբերյալ ուղեցույց 2. Անձի՝ ապաքաղաքացի հանդիսանալը սահմանելու ընթացակարգեր*, 5 ապրիլի, 2012 թ. HCR/GS/12/02, պարբ. 59-62, <http://www.unhcr.org/refworld/docid/4f7dafb52.html> կայքում:
- 6 «Միջազգային պաշտպանության կարիք չունեցող սահմանված անձինք» տերմինը մեկնաբանվում է այսպես. անձինք, ովքեր դիմել են միջազգային պաշտպանության, և որոնց հայցադիմումները հավուր պատշաճի՝ արդար ընթացակարգերով քննելուց հետո որոշվել է, որ նրանք չեն կարող ո՛ր չ փախստականի կարգավիճակ ստանալ 1951 թ. կոնվենցիայի չափորոշիչների հիման վրա, ո՛չ էլ որևէ այլ միջազգային կամ ազգային օրենքով ենթակա լինել միջազգային պաշտպանության: Տես ՄԱԿ ՓԳՀ, Գործկոմ, *Եզրակացություն միջազգային պաշտպանության կարիք չունեցող անձանց վերադարձման վերաբերյալ*, N. 96(LIV) – 2003, նախաբան, պարբ. 6, <http://www.unhcr.org/refworld/docid/3e686d6d.html> կայքում:

www.unhcr.org/3f93bca4.html կայքում:

- 7 Տես ստորև՝ հղում 22:
- 8 *Գուզարդին ընդդեմ Իտալիայի*, (1980), ՄԻԵԴ, հայց N. 7367/76, պարբ. 93, <http://www.unhcr.org/refworld/docid/502d42952.html> կայքում:
- 9 *Ամուտրն ընդդեմ Ֆրանսիայի*, (1996), ՄԻԵԴ, հայց N. 19776/92, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b76710.html> կայքում:
- 10 Տես, օրինակ, *Գուզարդին ընդդեմ Իտալիայի*, վերը՝ հղում 8:
- 11 Տես, օրինակ, *Մեդվենևն ընդդեմ Ֆրանսիայի*, (2010), ՄԻԵԴ, հայց N. 3394/03, <http://www.unhcr.org/refworld/docid/502d45dc2.html> կայքում և *Զ.Հ.Ա.-ն ընդդեմ Իսպանիայի*, ՄԱԿ-ի՝ Կտտնաքննչի դեմ հանձնաժողով (ԿԴՀ), CAT/C/41/D/323/2007, 21 նոյեմբերի, 2008, <http://www.unhcr.org/refworld/docid/4a939d542.html> կայքում:
- 12 «Արտատարածքային» կալանքը վերաբերում է, այլոց թվում, ապաստան հայցողների՝ այլ երկրի տարածք փոխադրմանը և կալանքին, ներառյալ այդ պետության հետ համաձայնությամբ: Կալանքի տվյալ վայրում մարդու իրավունքների չափանիշներին համապատասխանելու՝ ուղարկող պետության պատասխանատվությունը կախված է մի շարք գործոններից: Տես, օրինակ, ՄԱԿ ՓԳՀ, *Խորհրդարկական կարծիք Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ.կոնվենցիայով և դրա 1967 թ. Արձանագրությամբ սահմանված՝ չվերադարձման պարտավորությունների արտատարածքային կիրառման վերաբերյալ*, 26 հունվարի, 2007 թ., <http://www.unhcr.org/refworld/pdfid/45f17a1a4.pdf> կայքում:
- 13 Էդվարդս, *Վերադարձ հիմունքներին. Անձի՝ ազատության և անվտանգության իրավունքը* և «Կալանքի այլընտրանքները», վերը՝ հղում 4, նկ. 1:
- 14 Հոդված 1(Ա)(2), *Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա*, 1951 (1951 թ. կոնվենցիա), փոփոխված և լրացված *Փախստականների կարգավիճակի մասին արձանագրությամբ*, 1967 թ.:
- 15 Տես, մասնավորապես, *Աֆրիկայում փախստականների խնդիրների առանձնահատկությունների կառավարման մասին կոնվենցիա*, 1969 թ. (ԱՄԿ

կոնվենցիա) Հոդված 1(2), Կենտրոնական Ամերիկայում, Մեքսիկայում և Պանամայում փախստականների միջազգային պաշտպանության վերաբերյալ կոլոբվիում, Փախստականների մասին կարթագենյան հռչակագիր, 1984 թ., Եզրակացություն N. 3, (1984 թ. կարթագենյան հռչակագիր):

- 16 Տե՛ս, մասնավորապես, Եվրոպական Միություն, *Խորհրդի հանձնարարական 2011/95/EU, 13 դեկտեմբերի, 2011՝ Երրորդ երկրների քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես միջազգային պաշտպանության օգտառուներ սահմանելու, փախստականների կամ լրացուցիչ պաշտպանության կարիք ունեցողների համար միասնական կարգավիճակի և շնորհվող պաշտպանության չափանիշների վերաբերյալ* (վերափոխված), 20 դեկտեմբերի, 2011, <http://www.unhcr.org/refworld/docid/4f197df02.html> կայքում: Եվրոպական Միություն, *Խորհրդի հանձնարարական 2001/55/EC, 20 հուլիսի, 2001՝ Տեղահանվածների զանգվածային ներհոսքի պարագայում ժամանակավոր պաշտպանության տրամադրման նվազագույն չափանիշների և անդամ պետությունների՝ այս անձանց ընդունման և հետևանքները կրելու ջանքերի հավասարակշռության միջոցների վերաբերյալ, 7 օգոստոսի, 2001 թ., <http://www.unhcr.org/refworld/docid/3ddcee2e4.html> կայքում:*
